

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱՆԶԱԿ

ՄՆԱՔ ԲԱՐՈՎ

— Դե՛, կենտրոնի՛ դեպուտատ. առա՛ջ: Անհրաժեշտ է շտապել, եթե ցանկանում ենք մյուսների հետ միասին հասնել ճաշասեղանին: Ցատկի՛ր, մարկիզ, այն կողմից, այդպես լա՛վ է: Դուք ակոսներն անցնում եք իսկական եղջերուի նման: Այս խոսքերն արտասանեց մի որսորդ, որը նստած Իլ-Ադամի անտառի եզրին, հանդարտորեն վերջացնում էր Հավանայի իր սիգարը, սպասելով ընկերոջը, որն անկասկած, երկար ժամանակ անտառի մացառուտներում մոլորվել էր: Նրա մոտ կանգնած չորս հևացող շները նույնպես նայում էին այն անձնավորությանը, որին ուղղված էին այդ խոսքերը:

Որպեսզի հասկանալի լինի, թե որքան ծաղրական էին ընդհատումներով կրկնվող այս ակնարկությունները, պետք է ասել, որ մյուս որսորդը հաստիկ ու կարճահասակ մարդ էր, որի ցցուն փորը ցույց էր տալիս իսկական մինիստրական գիրություն: Այնպես որ նա հագիվ էր կարողանում մեծաքայլ անցնել նոր հնձված ընդարձակ արտի ակոսների միջով, որի ծղոտները սաստիկ խանգարում էին նրան քայլելիս: Բացի այդ, ի լրումն նրա տանջանքների, արևի շողերը շեշտակի զարնվելով նրա դեմքին, այնտեղ հավաքում էին քրտինքի խոշոր կաթիլներ և հավասարակշռությունը պահելու համար, նա երբեմն դեպի ետ և երբեմն դեպի առաջ էր թեքվում, այդպիսով նմանվելով ուժգնորեն ցնցվող կառքի:

Այդ մեկն էր այն օրերից, որոնք սեպտեմբեր ամսվա ընթացքում արևադարձային տապով արագացնում են խաղողների հասունանալը: Եղանակը փոթորիկ էր գուշակում: Թեև կապույտի բազմաթիվ մեծ տարածություններ հորիզոնում դեռևս բաժանում էին խոշոր սև ամպերը, այնուամենայնիվ, երևում էր, թե ինչպես շառագույն ամպերը սոսկալի արագությամբ առաջանում էին և գորշավուն թեթև մի վարագույր էին փռում արևմուտքից արևելք: Քամին օդի բարձր ոլորտներում էր շարժվում, և մթնոլորտը դեպի հովիտներն էր մղում գետնի կիզիչ գոլորշիները: Որսորդն անցնում էր ձորակով, որը շրջապատված էր բարձր ծառերով, որոնք օդից զրկում էին այն և որտեղ հնոցի ջերմություն էր զգացվում: Հրատոչոր և լուռ անտառը, կարծես թե ծարավ էր: Թռչունները և միջատները համր էին, և ծառերի կատարները հագիվ էին խոնարհվում:

Նրանք, որոնք հիշում են 1819 թվականի ամառը, անշուշտ պիտի կարեկցեին տեսնելով տվյալ տանքները խեղճ աստիճանավորի, որը քրտնաթոր ուզում էր հասնել իրեն ծաղրող ընկերոջը: Վերջինս, ծխելով իր սիգարը, արևի դիրքից հաշվել էր, որ երեկոյան մոտավորապես ժամը հինգը կլինէր:

— Ո՞ր սատանայի ծոցն ենք ընկել,— ասաց հաստիկ որսորդը, սրբելով ճակատը և հենվելով բացատի մի ծառին, զրեթե իր ընկերոջ դիմաց, որովհետև զգում էր, որ իրենց բաժանող փոսի վրայից ցատկելու ուժ չունի այլևս:

— Ի՞նձ եք հարցնում,— ծիծաղելով պատասխանեց զառիվայրը պսակոդ բարձր ու դեղնած խոտերի մեջ պառկած որսորդը:

— Երդվո՛ւմ եմ սուրբ Հյուբերով,— բացականչեց նա իր սիգարի մնացորդը նետելով փոսի մեջ,— որ ուրիշ անգամ երբեք ռիսկ չեմ անի անծանոթ վայրում մի դատավորի հետ թափառել, մինչև անգամ եթե նա լինի կոլեջի իմ վաղեմի ընկերը:

— Բայց, Ֆիլի՛պ, ուրեմն դուք այլևս ֆրանսերեն չեք հասկանում: Անկասկած դուք ձեր խելքը թողել եք Սիբիրում,— պատասխանեց հաստիկ մարդը՝ ցավագնորեն կոմիկ մի հայացք գցելով հարյուր քայլ հեռվում գտնվող ուղեցույց սյան վրա:

— Հասկանում եմ,— պատասխանեց Ֆիլիպը, որը հանկարծ ոտքի կանգնեց, վերցրեց իր հրացանը, մի ուսոյունով սլացավ դաշտ և ուղղվեց դեպի ուղեցույց սյունը:

— Այս կողմով, դ՛Ալբոն, այս կողմով, կիսադարձ դեպի ձախ,— ձայն տվեց նա իր ուղեկցին, ժեստով ցույց տալով նրան մի լայն և սալահատակված ճանապարհ:— Բայեի ճանապարհն է դեպի Իլ-Ադամ,— հարեց նա,— այս ուղղությամբ մենք կգտնենք Կասանի ճամփան, որը պետք է ճյուղավորվի Իլ-Ադամի՝ ճանապարհին:

— Այդ ճիշտ է, գնդապե՛տ,— ասաց դ՛Ալբոնը, գլխին դնելով գլխարկը, որով նա հովհարում էր երեսը:

— Դե՛, ուրեմն, առա՛ջ, իմ հարգարժա՛ն խորհրդական,— պատասխանեց գնդապետը սուլելով շներին, որոնք, ինչպես երևում էր, արդեն նրան ավելի շատ էին հնազանդվում, քան դատավորին, որին պատկանում էին:

— Գիտե՞ք, պարոն մարկիզ,— հեգնորեն վրա բերեց ծաղրասեր զինվորականը,— որ դեռևս երկու մղոնից ավելի ունենք անցնելու: Հեռվում երևացող գյուղը Բայենը պետք է լինի:

— Աստվա՛ծ իմ,— գոչեց մարկիզ դ՛Ալբոնը,— գնացե՛ք Կասան, եթե այդ կարող է ձեզ հաճելի լինել, սակայն դուք կգնաք մենակ: Իսկ ես կնախընտրեմ սպասել այստեղ, հակառակ մոտալուտ փոթորկի, մինչև որ դուք ինձ համար մի ձի ուղարկեք դղյակից: Դուք ինձ ձեռ առիք, Սյուսի՛: Կասանից չհեռանալով, մենք ավելի հաջող և լավ որս կանեինք ինձ ծանոթ վայրերում: Մինչդեռ, ահա այսպես, զվարճանալու փոխարեն, առավոտյան ժամը չորսից սկսած, քերծեի նման վազեցրիք ինձ, և մենք այժմ նախաճաշելու համար միայն երկու բաժակ կաթ ունենք: Ա՛հ, եթե երբեք մի օր դատական ատյանում դատ ունենաք, ես այնպես կանեմ, որ դուք այն կորցնեք, թեկուզ հարյուր անգամ իրավացի լինեք...

Եվ որսորդը վիատված նստեց ճանապարհի սահմանաքարերից մեկի վրա, որ գտնվում էր ուղեցույց սյան տակ, մի կողմը դրեց իր հրացանը, դատարկ որսապարկը ու երկար հառաչանք արձակեց:

— Ֆրանսիա՛, ահա քո դեպուտատները,— գոչեց գնդապետ Ֆիլիպ դը Սյուսին ծիծաղելով:— Ա՛հ, իմ խեղճ դ՛Ալբոն, եթե դուք էլ ինձ պես վեց տարի գտնվեի՛ք Սիբիրի խորքերում...— նա չվերջացրեց, աչքերը բարձրացրեց դեպի երկինք, որպես թե իր դժբախտությունները գաղտնիք լինեին իր և աստծո միջև:

— Դե՛, քայլեցե՛ք,— ավելացրեց նա,— եթե այսպես նստած մնաք, կորած եք:

— Ի՞նչ եք ուզում, Ֆիլիպ, սա շատ հին սովորություն է դատավորի մոտ: Պատիվս վկա, ես սաստիկ ուժասպառ եմ եղել, գոնե մի նապաստակ սպանեի:

Երկու որսորդները բավականին հազվագյուտ հակադրություն էին ներկայացնում: Դատավորը քառասուներկու տարեկան էր, բայց երեսունից ավելի չէր երևում: Մինչդեռ զինվորականը երեսուն տարեկան էր, բայց առնվազն քառասուն տարեկանի տեսք ուներ: Նրանք, երկուսն էլ, զարդարված էին շքանշանի կարմիր վարդաձև ժապավենով, շքանշան, որ տրվում է «Պատվո լեգեոնի» ասպետներին:

Գնդապետի գլխարկի տակից խույս էին տալիս անծեղի փետուրի նման սպիտակախառն սև մազափնջեր: Խարտյաշ, գանգուր և գեղեցիկ մազերի խոպոպները պճնում էին դատավորի քունքերը: Մեկը բարձրահասակ էր, չոր, նիհար, ջղուտ, և սպիտակ դեմքի խորշոմները մատնում էին սարսափելի կրքեր, կամ ահավոր վշտեր ու դժբախտություններ: Մյուսը՝ էպիկուրյանին արժանի զվարթություն և առողջությունից փայլող դեմք ուներ: Երկուսն էլ կիզվել ու սևացել էին արևից: Շեկ կաշվից երկար սոնապանները կրում էին անցած բոլոր ճահճուտների խանդակների հետքերը:

— Գնա՛նք,— գոչեց պարոն դը Մյուսին,— առա՛ջ: Մի ժամ քայլելուց հետո կլինենք Կասանում, մի ճոխ սեղանի շուրջը:

— Երևի դուք երբեք չեք սիրել,— պատասխանեց խորհրդականը, խղճալիորեն կոմիկ մի արտահայտությամբ,— և նույնքան անգուր չեք, որքան պատժական օրենսգրքի 304-րդ հոդվածը:

Ֆիլիպ դը Մյուսին ուժգնորեն ցնցվեց: Նրա լայն ճակատը ծածկվեց կնճիռներով, իսկ դեմքը դարձավ այնքան մուգ, ինչպես մթին էր երկինքն այդ պահին: Թեև դառն ու ահավոր մի հիշողություն կնճռոտեց նրա դիմագծերը, բայց չարտասվեց: Ուժեղ շատ մարդկանց նման նա գիտեր իր հույզերը ետ մղել դեպի սրտի խորքը, և գուցե գտնում էր, ինչպես շատ անբիծ բնավորություններ, որ անհամեստություն կլինեի իր վշտերը քողագերծել, երբ մարդկային ոչ մի խոսք չի կարող վերարտադրել դրանց խորությունը, և երբ վախենում ես այն մարդկանց ծաղրից, որոնք չեն ուզում դրանք հասկանալ:

Պարոն դ'Ալբոնը մեկն էր այն նրբին հոգիներից, որոնք գուշակում են վշտերը և խորապես զգում այն հուզումը, որ ակամա հարուցել են որևէ անտակտությամբ: Նա հարգեց իր բարեկամի լռությունը, վեր կացավ, մոռացավ իր հոգնածությունը, լռությամբ հետևեց նրան, վշտացած այն բանի համար, որ անզգուշորեն հպել էր մի վերքի, որը հավանաբար դեռ չէր սպիացել:

— Մի օր, բարեկա՛մ, — ասաց նրան Ֆիլիպը, սեղմելով նրա ձեռքը և սրտամորմոք նայվածքով շնորհակալություն հայտնելով անխոս զոջման համար,— մի օր, ես քեզ կպատմեմ իմ կյանքի պատմությունը, այսօր չեմ կարող:

Նրանք շարունակեցին լռությամբ քայլել: Երբ թվաց, թե գնդապետի վիշտը փարատվել է, խորհրդականը դարձյալ զգաց իր հոգնածությունը, և ավելի բնագրով, քան թե գիտակցական ցանկությամբ, նրա հոգնաբեկ աչքերը սկսեցին խուզարկել անտառի խորքերը: Նա գննեց ծառերի կատարները, քննեց ծառուղիները, հուսալով գտնել այնտեղ մի ապաստարան, որտեղ կարելի լինեի հյուրընկալվել: Հասնելով մի քառուղու, նրան թվաց, որ ծառերի միջից բարձրանում է թեթև մի ծուխ: Կանգ առավ, նայեց մեծ ուշադրությամբ և թավուտի միջև տեսավ մի քանի սոճիների կանաչ և մուգ ձյուղերը:

— Տո՛ւն, տո՛ւն,— բացականչեց նա մի այնպիսի ուրախությամբ, ինչպես նավաստին կգոչեր՝
«Ցամա՛ք, ցամա՛ք»:

Հետո արագորեն նետվեց բավական խիտ մացառուտի միջով, իսկ գնդապետը, որը խորասուզվել էր խորունկ մտորումների մեջ, մեքենաբար հետևեց նրան:

— Ես գերադասում եմ այստեղ գտնել ձվածեղ, տնական հաց և մի աթոռ, քան թե գնալ Կասան²՝ փնտրելու փափուկ դիվաններ, գետնասունկ ու Բորդոյի գինի:

Խանդավառ այդ բացականչությունը դուրս պրծավ խորհրդականից, երբ նա հեռվում, անտառի բազմառատ կոճղերի արանքից տեսավ սպիտակավուն մի պատ:

— Ա՛հ, ա՛հ, կարծես թե սա մի հին վանատուն է,— նորից բացականչեց մարկիզ դ'Ալբրոնը, հասնելով մի հնաձև սև վանդակորմի, որտեղից նա կարողացավ տեսնել բավական ընդարձակ պուրակի մեջ մի շենք, այնպիսի ոճով կառուցված, որ հին ժամանակ հատուկ էր վանական հուշարձաններին:

— Այդ անպիտան աբեղաները ինչպես լա՛վ գիտեն հարմարավետ վայրեր ընտրել:

Այս նոր բացականչությունն արտահայտությունն էր այն զարմանքի, որ դատավորին պատճառում էր նրա աչքերի առջև բացվող այդ բանաստեղծական մենաստանը: Տունը գտնվում էր զառիվայրի կեսին, լեռան լանջին, իսկ գազաթում՝ Ներվիլ գյուղն էր: Անտառի դարավոր ու մեծ կաղնիները այս բնակության շուրջը ընդարձակ մի շրջանակ էին կազմում և իսկական մենաստան էին դարձնում այն: Բուն շենքը, մի ժամանակ աբեղաների հատկացված՝ արևահայաց դիրք ունեւ, իսկ պուրակը՝ մոտավորապես քառասուն արպան տարածություն: Տան մերձակայքում տարածվում էր կանաչ, գեղեցիկ մի մարգագետին, խիստ վարպետությամբ բաժանված վճիտ առվակներով և շնորհալիորեն ու առանց առերևույթ արվեստականության դասավորված ավազաններով: Այստեղ ու այնտեղ բարձրանում էին վայելչաձև, սաղարթախիտ, կանաչ ծառեր: Ահա ճարտարորեն պատրաստված քարանձավներ, միաձույլ ճեմելիքներ, որոնք իրենց ավերված աստիճաններով ու ժանգոտած բազրիքներով յուրահատուկ տեսք էին տալիս այս վայրի Թեբայիտին:

Արվեստն այնտեղ վայելչագեղորեն միացրել էր իր կառուցումները բնության ամենագեղատեսիլ կերտումների հետ: Թվում էր, թե մարդկային կրքերը պետք է մահանային այս հսկայական ծառերի ստորոտում, որոնք արգելում էին աշխարհի աղմուկների մերձեցումն այս ապաստարանին, ինչպես այնտեղ մեղմում էին արևի կիզիչ ճառագայթները:

— «Ի՛նչ անկարգություն»,— շնջաց պարոն դ'Ալբրոնը, վայելելով այն մթին տպավորությունը, որ ստացվում էր այդ ավերակների պեյզաժից, որն ասես անեծքով էր դրոշմված: Դա նմանվում էր մարդկանց կողմից լքված աղետալի մի վայրի: Բաղեղն ամենուրեք տարածել էր իր փարթամ ճյուղերն ու իր ճոխ ծածկույթը: Դարչնագույն, դեղին, կարմիր և կանաչ մամուռները փռել էին իրենց ռոմանտիկ երանգները ծառերի, նստարանների, տանիքների և քարերի վրա: Որդնոտած պատուհանները մաշվել էին անձրևից և քանդվել՝ ժամանակի ընթացքում:

Պատշգամբները ջարդված էին, ճեմելիքները քանդված: Մի քանի վանդակափեղկեր կանգնել էին միայն իրենց ծխիներից մեկի վրա: Իրարից անջատված դռները չէին կարող այլևս դիմադրել որևէ հարձակողի: Անխնամ թողնված պտղատու ծառերի ճյուղերը տարածվում էին հեռու, առանց բերք տալու: Ծառուղիներում աճել էին բարձր խոտեր:

Այս բոլոր բեկորները թողնում էին զմայլելի մի բանաստեղծության տպավորություն և անբջային պատկերացումներ հարուցում դիտողի հոգու մեջ: Բանաստեղծը այնտեղ խորասուզված կմնար երկարատև մեղամաղձոտության մեջ, հիանալով այդպիսի ներդաշնակ անկարգության վրա, այդ ավերածության վրա, որ գուրկ չէր գրավչությունից: Այդ պահին արևի մի քանի ճառագայթներ երևացին ամպերի ճեղքվածքից, հագարավոր գույների ցայտքերով լուսավորեցին կիսավայրենի այս տեսարանը: Գորշ կղմինդրները փայլփլեցին, քարաքոսերը շողացին, ֆանտաստիկ ստվերներ շարժվեցին մարգերի վրա, ծառերի տակ, մեռած գույները կենդանացան, սուր հակադրությունները բխվեցին, տերևները լույսի մեջ անջատվեցին: Հանկարծ լույսն անհետացավ: Այս բնականորեն, որ թվում էր, թե խոսել էր, լռեց և կրկին դարձավ մթին կամ ավելի շուտ մեղմ, ինչպես աշնանային վերջալույսի ամենամեղմ գունավորումը:

«Սա «Քնած արքայադստեր» պալատն է,— ասաց դատավորը յուրովի, որը հիմա այդ տունը դիտում էր կալվածատիրոջ աչքերով:— Ո՞ւմ կարող է պատկանել արդյոք այս: Տխմարություն կլինե՞ր այսպիսի գեղեցիկ կալվածքում չբնակվելը»:

Վանդակորմի աջ կողմում տնկված ընկուզենու տակից իսկույն սլացավ մի կին և անաղմուկ անցավ խորհրդականի առջևից այնքան արագ, որքան ամպի ստվերը: Այս տեսիլը զարմանքից համր դարձրեց նրան:

— Հը՞, դ՛Ալբոն, ի՞նչ պատահեց,— հարցրեց գնդապետը:

— Շփում եմ աչքերս, իմանալու համար արթուն եմ, թե քնած,— պատասխանեց խորհրդականը, մոտենալով վանդակորմին, ուրվականը նորից տեսնելու ջանքով:

— Հավանաբար նա այդ թզենու տակն է,— ասաց նա, ցույց տալով Ֆիլիպին վանդակորմի ձախ կողմում պատից վեր բարձրացած ծառի տերևները:

— Ո՞վ:

— Է՛հ, ի՞նչ իմանամ,— պատասխանեց դ՛Ալբոնը:— Այնտեղից իմ առաջ հայտնվեց տարօրինակ մի կին,— ավելացրեց նա, ցածրաձայն:— Ինձ այնպես թվաց, թե նա ավելի պատկանում է ստվերների աշխարհին, քան թե կենդանի աշխարհին: Նա այնքան ճկուն, այնքան թեթևաշարժ, այնքան նրբանյութ էր, որ թափանցիկ պետք է եղած լինե՞ր: Դեմքը սպիտակ էր կաթի նման: Հագուստները, աչքերն ու մազերը սև էին: Նա նայեց ինձ անցնելիս, և թեև ես վախկոտ չեմ, այնուամենայնիվ նրա անշարժ և ցուրտ նայվածքը արյունս սառեցրեց երակներիս մեջ:

— Գեղեցի՞կ էր նա,— հարցրեց Ֆիլիպը:

— Չգիտեմ: Դեմքի վրա միայն աչքերը տեսա:

— Գրո՛ղը տանի Կասանի ճաշը,— գոչեց գնդապետը,— մնանք այստեղ: Երեխայական անդիմադրելի ցանկություն եմ զգում մտնելու այս արտառոց կալվածքի ներսը: Տեսնո՞ւմ ես լուսամուտների կարմիր գույնով ներկված շրջանակները և դռների ու փեղկերի վրա գծված կարմիր զարդագծերը: Չե՞ս կարծում, որ դա սատանայի բնակարանը եղած լինի: Գուցե նա այդ ժառանգել է աբեղաներից: Դե՛, վազենք այդ սև ու սպիտակ կնոջ հետևից: Հառա՛ջ,— գոչեց գնդապետը շինծու զվարթությամբ:

Այդ պահին երկու որսորդները լսեցին որոգայթում բռնված թռչունի ճիչին շատ նման մի ճիչ: Նրանք ականջ դրին:

Չորացած թփերի տերևների շրշյունն արձագանքեց լռության մեջ, ինչպես հուզված ալիքի մրմունջը, սակայն ինչքան էլ լարեցին իրենց լսողությունը նոր ձայներ լսելու համար, գետինը մնաց լուռ ու թաքցրեց անձանդությունը քայլերի գաղտնիքը, եթե իրոք նա քայլել էր:

— Սա ինչ-որ արտասովոր է,— գռչեց Ֆիլիպը հետևելով պուրակի պատերը եզերող ուրվագծին:

Շուտով երկու բարեկամները հասան անտառի մի արահետի, որը տանում էր դեպի Շովրի գյուղը: Այս ճամփով բարձրանալով դեպի Փարիզի ճանապարհը, նրանք իրենց գտան մի մեծ վանդակորմի առաջ և այն ժամանակ տեսան այդ խորհրդավոր բնակության գլխավոր ֆասադը: Այս կողմում ավերածությունը հասել էր իր ծայրահեղ աստիճանին: Բնակարանի պատերը ակոսված էին անհամար ճեղքվածքներով: Կղմինդրների և թերթաքարերի կտորները կուտակված էին գետնի վրա, իսկ քանդված տանիքները մատնում էին կատարյալ անհոգություն: Ծառերի տակ ընկած պտուղները փտում էին և հավաքող չկար:

Մարգագետնում մի կով հանդարտորեն արածում էր և կոխոտում ածուների ծաղիկները: Մինչդեռ մի այծ ճարակում էր կանաչ խաղողները և որթատունկի տերևալից ճյուղը:

— Այստեղ ամեն ինչ ներդաշնակ է և կարծես թե անկարգությունը մի տեսակ կազմակերպված է,— ասաց գնդապետը քաշելով մի զանգի շղթան, սակայն զանգն առանց լեզվակի էր... Երկու որսորդները լսեցին միայն ժանգոտած մի զսպանակի բացառիկորեն սուր ճոնչոցը: Թեև վանդակորմի մոտ պատի մեջ բացված փոքրիկ դուռը շատ էր ավերված, այնուամենայնիվ դիմադրեց բանալու կամ խորտակելու փորձերին:

— Օ՛հ, օ՛հ, այս բոլորը շատ հետաքրքրական են դառնում,— ասաց Ֆիլիպն իր ուղեկցին:

— Եթե դատավոր չլինեի,— պատասխանեց պարոն դ'Ալբոնը,— պիտի կասկածեի, որ այդ սևագգեստ կինը անպայման վիուկ է:

Հագիվ թե նա ավարտել էր իր խոսքերը, երբ կովը հանդարտորեն եկավ վանդակորմի մոտ և ներկայացրեց իր տաք դունչը, կարծես թե նա անդիմադրելի պահանջ էր զգում մարդկային արարածներ տեսնելու:

Այդ ժամանակ մի կին, եթե կարելի է այս անունը տալ անբացատրելի մի էակի, որը վեր կացավ թփերի տակից, քաշեց կովի պարանից: Այդ կինը գլխին կրում էր կարմիր թաշկինակ, որի տակից դուրս էին թափվում նրա խարոյաշ և խճճված մազերի փնջերը: Վիզը բաց էր: Հագել էր կոշտ բրդից, սևով ու սպիտակով խառն գծավոր կարճ մի շրջագգեստ, որը թույլ էր տալիս տեսնել նրա սրունքները: Կարելի էր ենթադրել, որ նա պատկանում էր Կուպերի³ նկարագրած կարմրամորթների մի ցեղախումբի, որովհետև վիզը և մերկ թևերը կարծես կղմինդրի գույնով էին ներկված: Բանականության ոչ մի նշույլ չէր կենդանացնում նրա տափակ դեմքը: Կապտավուն աչքերն անփայլ էին ու ջերմությունից գուրկ: Ցանցառ, սպիտակ մի քանի մազաթելեր հոնքերի տեղ էին բռնում: Վերջապես բերանը ծոված էր այնպես, որ երևան էր հանում վատ շարված ատամները, բայց նույնքան սպիտակ, որքան շան ատամները:

— Օհո՛, կի՛ն,— բացականչեց պարոն դը Սյուսին:

Կինը դանդաղորեն հասավ մինչև վանդակադուռը, անմիտ արտահայտությամբ ակնապիշ դիտելով երկու որսորդներին, որոնց տեսքից ցավագին և հարկադրյալ ժպիտ հայտնվեց նրա դեմքին:

— Որտե՞ղ ենք գտնվում: Ի՞նչ տուն է այս: Ո՞ւմն է նա: Ո՞վ եք դուք: Դուք այստեղի՞ց եք...

Այս և մի շարք այլ հարցերին, որ երկու բարեկամները ուղղեցին նրան, նա պատասխանեց միայն կոկորդային մի քրթմնջունով, որ թվում էր թե, ավելի պատկանում էր անասունի, քան մարդկային արարածի:

— Չե՞ք տեսնում, որ նա խուլ ու համր է,— ասաց դատավորը:

— **Բոնգոմ**,— ասաց գեղջկուհին:

— Ա՛հ, իրավացի է նա: Սա Բոնգոմ հին վանքն է,— ասաց պարոն դ'Ալբոնը:

Հարցերը վերսկսվեցին: Սակայն կամակոր ու քմահաճ երեխայի նման, գեղջկուհին կարմրեց, խաղաց իր փայտյա մաշիկի հետ, ոլորեց նորից արածացող կովի պարանը, նայեց երկու որսորդներին, զննեց նրանց հագուստի բոլոր մասերը, նվնվաց, փնթփնթաց, սակայն չխոսեց:

— Քո անո՞ւնը,— հարցրեց Ֆիլիպը, սևեռուն դիտելով նրան այնպես, ասես ուզում էր նրան կախարդել:

— Ժնկին,— պատասխանեց կինը ապուշ ծիծաղով:

— Մինչև հիմա, կովը ամենախելացի արարածն է, որ մենք տեսնում ենք այստեղ,— բացականչեց դատավորը:— Հիմա ես կկրակեմ, որպեսզի մարդիկ հավաքվեն:

Եվ այն րոպեին, երբ մարկիզ դ'Ալբոնը բռնեց հրացանը, գնդապետը արագ մի շարժումով կանգնեցրեց նրան և մատով ցույց տվեց այն անձանություններին, որն այնքան ուժգնորեն շարժել էր նրանց հետաքրքրությունը: Այդ կինը, ասես թաղվել էր խոր մտածությունների մեջ և դանդաղ ու համրաքայլ գալիս էր բավական հեռու գտնվող մի ծառուղով, այնպես որ երկու բարեկամները ժամանակ ունեցան լավ զննելու նրան: Նա հագել էր սև սատինից շատ մաշված մի շրջագգեստ: Երկար մազերը բազմաթիվ խոպոպներով թափվում էին ճակատի վրա, ուսերի շուրջը, իջնում էին մեջքից ավելի ներքև և ծառայում էին նրան որպես շալ: Ըստ երևույթին վարժված լինելով այդպիսի անկարգության, հազվադեպորեն նա քունքերից հեռացնում էր այդ թափվող վարսերը, սակայն այդ վարսերը քունքերից հեռացնելու համար էլ նա հանկարծ շարժում էր իր գլուխը և երկու անգամ չէր կրկնում միննույն շարժումը՝ ճակատն ու աչքերը այդ թանձր քողից ազատելու համար: Բացի այդ, նրա շարժումը, կենդանու շարժման նման, ուներ այն հիանալի մեքենական արագությունը, որը հրաշք կարող էր թվալ կնոջ համար:

Երկու որսորդները մեծ զարմանքով տեսան, որ նա ցատկեց խնձորենու մի ճյուղի վրա և թռչունի թեթևությամբ կառչեց նրանից: Նա ծառից պոկեց մրգերը, կերավ դրանք, ապա ընկավ գետին մի այնպիսի շնորհալի թուլությամբ, որով կարելի է հիանալ սկյուռների մոտ: Նրա անդամներն ունեին մի այնպիսի առաձգականություն, որ նրա ամենափոքր շարժումները գերծ էին պահում մինչև իսկ որևէ նեղումից կամ ճիգից: Նա խաղաց կանաչ մարգի վրա, թավալվեց այնտեղ, ինչպես կաներ մի երեխա, հետո հանկարծ ձեռքերն ու ոտքերը գցեց դեպի առաջ և մնաց խոտի վրա տարածված այնպիսի ինքնալքումով, շնորհալիությամբ, բնականությամբ, որ նման էր արևի ճառագայթների տակ նիրհող էգ կատվի: Երբ հեռվում ամպրոպը որոտաց, նա հանկարծակի շրջվեց և չորեքթաթ կանգնեց, օտարականի գալը լսող շան հրաշալի ճարպկությամբ: Այդ արտառող դիրքի շնորհիվ նրա սև վարսերը հանկարծ բաժանվեցին երկու լայն մազակապերի, որոնք նորից ընկան գլխի յուրաքանչյուր կողմը և այս բացառիկ տեսարանի հանդիսատեսներին թույլատրեցին հիանալ նրա ուսերով, որոնց մոթթի սպիտակությունը փայլեց մարգագետնի մարգարտածաղիկների նման, և պարանոցով, որի կատարելությունը հնարավորություն էր տալիս կռահելու նրա մարմնի մյուս մասերը:

Հանկարծ նա մի ցավագին ճիչ արձակեց և ոտքի կանգնեց: Նրա շարժումները միմյանց հաջորդում էին այնքան շնորհալի, կատարվում էին այնքան թեթևակի, որ կարծես մարդկային արարած չլիներ, այլ մեկն այն օդանուշներից, որոնք հոչակված են Օսիանի⁴ երգերում: Նա գնաց դեպի ավազաններից մեկը, թեթևորեն ցնցեց իր ոտքերից մեկը, կռշիկից ազատվելու համար և թվաց, որ հաճույք է զգում ալաբաստրի պես սպիտակ ոտքը թաթախելով աղբյուրի մեջ, անտարակույս հիանալով այնտեղ իր առաջացրած ծփանքներով, որոնք ակնեղենների էին նմանվում: Հետո նա ծնրադրեց ավազանի եզերքին ու երեխայի նման զվարճացավ իր երկար հյուսքերը այնտեղ մխրճելով ու հանկարծ դուրս քաշելով, որպեսզի տեսնի շիթ առ շիթ թափվող ջուրը, որով ծանրաբեռնված էին դրանք: Ցերեկվա արևի ճառագայթները անցնելով կաթկթող ջրերի միջով՝ մարգարտյա մանյակներ էին կազմում:

— Այդ կինը խենթ է,— բացականչեց խորհրդականը:

Հանկարծ թնդաց Ժնևիկի արձակած խապոտ ճիչը, որը կարծես ուղղված էր անձանոթուհուն: Վերջինս փութով ուղղվեց, ետ մղեց մազերը դեմքի երկու կողմերից: Այդ ժամանակ գնդապետն ու մարկիզ դ'Ալբոնը որոշակի կարողացան տեսնել այդ կնոջ դիմագծերը: Կինը նկատելով երկու բարեկամներին, մի քանի ուսյունով ու եղնիկի թեթևաշարժությամբ վազեց դեպի վանդակադուռը:

— **Մնա՛ք բարով**,— ասաց նա, ներդաշնակ ու մեղմ ձայնով, սակայն այդ մրմունջը, որին այնքան անհամբերությամբ սպասում էին որսորդները, չբացահայտեց նվազագույն մի զգացում կամ հուշ:

Այդ կնոջ աչքերի երկար թարթիչները, խիտ ու սև հոնքերը, կարմրության ամենափոքր երանգից զուրկ մորթի շլացուցիչ սպիտակությունը հիացրին պարոն դ'Ալբոնին: Փոքրիկ և կապույտ երակներն էին միայն, որ հայտնում էին նրա սպիտակ գույնը: Երբ խորհրդականը դարձավ դեպի իր բարեկամը, այդ օտարոտի կնոջ իրեն ներշնչած զարմանքը հաղորդելու, նրան տեսավ մեռածի պես խոտի վրա փռված: Պարոն դ'Ալբոնը կրակեց օդի մեջ, որպեսզի մարդկանց կանչի և բղավեց. «օգնությո՛ւն», փորձելով այնուամենայնիվ, ոտքի կանգնեցնել գնդապետին: Անձանոթուհին, որ անշարժ կանգնել էր, այդ պայթյունի աղմուկի վրա, վիրավոր կենդանու նման սոսկումի ճիչ արձակեց ու փախավ սլացող նետի արագությամբ, պտտվեց մարգագետնի վրա, խորունկ զարհուրանքի նշաններ ցույց տալով: Պարոն դ'Ալբոնը Իլ-Ադամի ճանապարհի վրա քառանիվ մի կառքի թավալումը լսեց և իր թաշկինակը շարժելով, խնդրեց զբոսնողների օգնությունը: Շուտով կառքն ուղղվեց դեպի Բոնգոմ, և մարկիզ դ'Ալբոնը ճանաչեց պարոն և տիկին դը Գրանվիլներին, իր հարևաններին, որոնք շտապեցին իջնել կառքից և այն տրամադրեցին դատավորին: Բարեբախտաբար տիկին դը Գրանվիլը իր վրա ուներ հոտոտելու աղերի մի սրվակ, որից շնչել տվին պարոն դը Սյուսին: Երբ գնդապետը բացեց աչքերը, նայեց դեպի այն մարգագետինը, որտեղ անձանոթուհին դեռ շարունակում էր ճչալ ու վազել և արձակեց անորոշ մի բացականչություն, որը բացահայտում էր սոսկալի մի զգացում: Հետո նա նորից փակեց աչքերը այնպիսի շարժումով, կարծես խնդրելով իր բարեկամին հեռացնել իրեն այդ սրտաճմլիկ տեսարանից: Պարոն և տիկին դը Գրանվիլները սիրով տրամադրեցին իրենց կառքը խորհրդականին, ազնվաբար հայտնելով նրան, որ իրենք ոտքով են ցանկանում շարունակել իրենց զբոսանքը:

— Ո՛վ է այդ կինը,— հարցրեց դատավորը, ցույց տալով անձանոթուհուն:

— Ենթադրում են, որ եկել է Մուլենից,— պատասխանեց պարոն դը Գրանվիլը:

— Նա կոչվում է կոմսուհի դը Վանդիեր, ասում են, որ խելագար է, սակայն քանի որ նա միայն երկու ամիս է, ինչ այստեղ է գտնվում, չեմ կարող ձեզ երաշխավորել այդ ասեկոսների ճշմարտության համար:

Պարոն դ'Ալբոնը շնորհակալություն հայտնեց դը Գրանվիլ գույզին և մեկնեց Կասան:

— Նա ինքն է,— բացականչեց Ֆիլիպը, երբ գիտակցությունը տեղը եկավ:

— Ո՞վ,— հարցրեց դ'Ալբոնը:

— Ստեֆանին... Ա՛հ, մեռած և կենդանի, կենդանի և խենթ... կարծեցի, թե մեռնելու եմ:

Դատավորը խոհեմ մարդ էր, նա իսկույն հասկացավ լրջությունը այն տագնապի, որին մատնված էր իր բարեկամը, ուստի զգուշացավ հարցեր տալուց, կամ նրան զրգոելուց, սակայն անհամբերությամբ ցանկանում էր ժամ առաջ հասնել դոյակ, որովհետև գնդապետի լուրջ դրությունը և նրա բոլոր դիմագծերում տեղի ունեցած փոփոխությունը սաստիկ վախ էին ներշնչում, թե մի գուցե կոմսուհին իր սարսափելի հիվանդությունը հաղորդել է Ֆիլիպին: Հենց որ կառքը հասավ Իլ-Ադամի ծառուղուն, դ'Ալբոնը սպասավորին ուղարկեց ավանի բժշկի մոտ, այնպես որ, երբ գնդապետը պառկեց, բժիշկն արդեն գտնվում էր նրա մոտ:

— Եթե,— ասաց բժիշկը,— պարոն գնդապետը համարյա սոված չլիներ, անտարակույս կմեռներ: Հոգնությունը փրկել է նրան:

Մատնանշելով, թե նախնական ինչ նախազգուշություններ պետք է ձեռք առնել, բժիշկը դուրս եկավ, որպեսզի անձամբ ամոքիչ դեղաջուր պատրաստի:

Հաջորդ առավոտ պարոն դը Մյուսիի վիճակն ավելի լավ էր, սակայն բժիշկը ուզեց անձամբ հսկել հիվանդին:

— Ես, պարո՛ն մարկիզ, պետք է խոստովանեմ,— ասաց բժիշկը պարոն դ'Ալբոնին,— որ վախենում եմ ուղեղային կաթվածից: Պարոն դը Մյուսին շատ ուժեղ ցնցում է ստացել: Նրա մեջ դեռևս շատ ուժեղ են կրքերը, սակայն նրա մոտ առաջին հարվածը վճռական է: Վաղը, հավանաբար, վտանգն անցած կլինի:

Բժիշկն իսկապես չսխալվեց, և հաջորդ օրը թույլատրեց դատավորին տեսնվել իր բարեկամի հետ:

— Թանկագին դ'Ալբոն,— ասաց Ֆիլիպը սեղմելով նրա ձեռքը,— քեզնից մի ծառայություն եմ սպասում: Անմիջապես գնա՛ Բոնգոմ: Տեղեկացի՛ր ամեն ինչ մեր տեսած կնոջ վերաբերյալ և շտապ վերադարձի՛ր, որովհետև ես անհամբերությամբ բռնկեմք պիտի հաշվեմ:

Պարոն դ'Ալբոնը անմիջապես ցատկեց ձիու վրա և սրարշավ մեկնեց մինչև նախկին աբբայարանը: Հասնելով այնտեղ, նա վանդակադրան առաջ նկատեց նիհար, բայց բարյացակամ դեմքով մարդու, որը դատավորի այն հարցին, թե այդ ավերակ տանն է բնակվում, դրական պատասխան տվեց:

— Է՛հ, ի՛նչ, պարոն,— բացականչեց անծանոթը,— այդ դո՞ւք էիք, որ արձակեցիք հրացանի ճակատագրական կրակոցը: Քիչ էր մնում սպանեիք իմ խեղճ հիվանդին:

— Բայց, պարոն, ես օղի մեջ կրակեցի:

— Դուք ավելի փոքր չարիք կհասցնեիք կոմսուհուն, եթե ուղղակի նրան խփեիք:

— Լա՛վ ուրեմն, միմյանց մեղադրելու բան չունենք, որովհետև ձեր կոմսուհու տեսքը քիչ էր մնում սպաներ իմ բարեկամին, պարոն դը Մյուսիին:

— Ի՛նչ, Բարոն Ֆիլիպ դը Սյուսի՞ն էր այդ,— ապշահար գոչեց բժիշկը ձեռները միացնելով:— Նա եղե՞լ է Ռուսաստանում, Բերեզինայի գետանցումի՞ն՝:

— Այո՛,— պատասխանեց դ'Ալբոնը,— նա այնտեղ գերի ընկնելով կազակների ձեռքը, տարվել է Սիբիր, որտեղից տասնմեկ ամիս առաջ է վերադարձել:

— Մտե՛ք ուրեմն, պարո՛ն,— ասաց անծանոթը և առաջնորդեց նրան բնակարանի ներքնահարկի մի հյուրասրահ, որտեղ ամեն ինչ կրում էր քմահաճ ավերածության ակնհայտ դրոշմ:

Թանկարժեք հախճապակյա անոթներ ջարդված էին ճոճանակավոր ժամացույցի կողքին, որի վանդակը խնայված էր: Պատուհանների առաջ մետաքսահյուս ծանր վարագույրները պատռտված էին, մինչդեռ երկպատիկ մուսլին վարագույրները մնացել էին անվթար:

— Տեսնո՞ւմ եք,— ասաց նա պարոն դ'Ալբոնին՝ հյուրասրահից ներս մտնելիս,— տեսնո՞ւմ եք այս ավերածությունը, որ կատարել է այդ սքանչելի էակը, որին եմ նվիրել ես ինձ: Նա իմ եղբոր աղջիկն է, հակառակ իմ հիտության անգործության, այնուամենայնիվ հույս ունեմ մի գեղեցիկ օր նրան վերադարձնել իր կորցրած բանականությունը, փորձելով մի այնպիսի մեթոդ, որը դժբախտաբար միայն հարուստ մարդկանց է թույլատրված հետևել:

Հետո, մենության մեջ ապրող բոլոր մարդկանց նման, վերածնվող վշտի մատնված, նա երկարորեն պատմեց հետևյալ դեպքերը, որի պատմությունը համակարգվեց և թեթևացավ բազմաթիվ շեղումներից, որ արեցին և՛ պատմողը, և՛ խորհրդականը:

1812 թվականի նոյեմբերի 28-ին մարշալ Վիկտորը⁶ երեկոյան ժամը իննի մոտերը, լքելով Ստուդիանկայի⁷ բարձունքները, որը պաշտպանել էր ամբողջ օրը, այնտեղ թողեց մի հազար մարդ, որոնք պետք է մինչև վերջին թույլեն պաշտպանելին Բերեզինայի վրա կառուցված երկու կամուրջները, որ մինչ այդ դեռ մնում էին:

Այդ արիերգարդը ճգնում էր փրկել սառնամանիքից ընդարմացած ետ մնացող զինվորների զարհուրելի բազմությանը, որը համառորեն հրաժարվում էր թողնել բանակի գումակը:

Այս վեհանձն գորագնդի հերոսությունն անօգուտ էր: Զինվորները մասսայականորեն խոնվում էին Բերեզինայի եզերքին, գետանցի մոտ: Դժբախտաբար այդտեղ գտնվում էին մեծ քանակությամբ կառքեր, պարենասայլեր, ամեն տեսակ շարժական գույք, որ բանակը ստիպված էր լքել՝ նոյեմբերի 27—28-ի օրերին, գետանցը կատարելու միջոցին: Այս դժբախտները, անհուսալի հարստությունների ժառանգորդները, ցրտից անբանացած՝ բնակվում էին դատարկված բացօթյա ռազմաճամբարներում, ջարդում էին բանակի նյութեղենը հյուղակներ կառուցելու համար, վառում էին այն ամենը, ինչ ընկնում էր ձեռքները, կոտորում էին ձիերին՝ սնվելու համար, պոկում էին կառքերի կտավները՝ ծածկվելու համար, և քնում՝ փոխանակ շարունակելու իրենց ճանապարհը և գիշերվա ընթացքում հանդարտորեն անցնելու այդ Բերեզինան, որն անհավատալի մի ճակատագրականությամբ, արդեն այնքան աղետալի էր դարձել բանակի համար: Այդ խեղճ զինվորների անզգայությունը միայն նրանք կարող են հասկանալ, որոնք անցել են այդ ձյունե լայնածավալ անապատների միջով, առանց խմելիքի, բացի ձյունից, առանց անկողնի, առանց այլ հեռանկարի, բացի անսահման հորիզոնից, առանց ուրիշ սննդի, բացի ձյունից, կամ սառած մի քանի ճակնդեղից, մի քանի բուռ ալյուրից, կամ ձիու մսից:

Այդ դժբախտները մահանալով քաղցածությունից, ծարավից, հոգնածությունից կամ անքնությունից, հասնում էին ավագուտ գետափը, որտեղ գտնում էին փայտ, կրակ, ուտելեղեն, լքված անհաշիվ ռազմական սարքեր, բացօթյա ռազմաճամբարներ և վերջապես հանպատրաստից

ստեղծված մի ամբողջ քաղաք: Ստուդիանկա գյուղը ամբողջությամբ տեղահանված էր, բաժան-բաժան արված և բարձունքներից փոխադրված էր դաշտի մեջ: Ինչքան էլ տխուր ու վտանգավոր լինեք այս բնակավայրը, նրա թշվառություններն ու վտանգները, այնուամենայնիվ, հաճելի էին այդ մարդկանց համար, որոնք իրենց առաջ ոչինչ չէին տեսնում, բացի Ռուսաստանի ահավոր և ամայի տափաստաններից: Վերջապես մի ընդարձակ հիվանդանոց էր դա, որը հազիվ քսան ժամ միայն գոյություն ունեցավ: Կյանքից հոգնածությունը կամ անսպասելի հանգստության զգացումը այդ զանգվածի մեջ միայն մի մտածում էր հարուցում՝ հանգստանալ: Թեև ռուսական ձախ թևի հրետանին անդադրում ուժեղացնում էր այդ զանգվածին, որն անծայրածիր ձյան տարածության մեջ գծագրվում էր որպես երբեմն սև, երբեմն բոցավառ մի մեծ բիծ, անխոնջ արկերը թվում էին մի ավելորդ անհանգստություն այս թմրած ամբոխին, փոթորկի մի շանթ, որն արհամարհում էր ամեն մարդ, որովհետև հարվածելու էր միայն մահամերձներին, հիվանդներին կամ գուցե արդեն վաղուց մեռածներին: Ետ մնացող զինվորները ամեն բույե խմբերով հասնում էին: Այս մի տեսակ շարժում դիակները իսկույն բաժանվում էին և գնում՝ խարույկից խարույկ՝ մի տեղ մուրալու: Հետո, ավելի հաճախ, վտարվածները նորից էին միանում, բռնի ուժով ստանալու այն հյուրընկալությունը, որ իրենց մերժվել էր: Մնալով խուլ՝ մի քանի սպաների ազդանշանող ձայնին, որոնք մահ էին գուշակում հաջորդ օրվա համար, մարդիկ իզուր վատնում էին իրենց վերջին արիությունը, որն անհրաժեշտ էր գետնացումին, մի գիշերվա ապաստարան կառուցելու, հաճախ կորստաբեր մի կերակուր ճարելու վրա: Այդ մահը՝ որն սպասում էր նրանց, այլևս չարիք չէր թվում, քանի որ կարող էին գեթ մի ժամ քնել: Նրանք չարիք անունը տալիս էին միայն քաղցին, ծարավին ու ցրտին: Երբ այլևս չգտնվեց ո՛չ փայտ, ո՛չ կրակ, ո՛չ կտավ, շրթայագերծվեց մի քստմնելի մարտ՝ ամեն ինչից զուրկ նորեկների և այն հարուստների միջև, որոնք գոնե մի ապաստան ունեին: Բայց վերջապես եղավ մի պահ, երբ ռուսներից հետապնդված մարդիկ այլևս որպես ռազմաճամբար ունեին միայն ձյունը, որի վրա էլ քնեցին նրանք, այլևս չզարթնելու համար:

Անզգալիորեն, գրեթե անէացած մարդկային այս զանգվածը դարձավ այնքան խուլ, այնքան անմիտ կամ գուցե այնքան երջանիկ, որ Վիտգենշտեյնի⁸ հրամանատարության տակ հարձակվող քսան հազար ռուսներին հերոսաբար դիմադրող մարշալ Վիկտորն ստիպված եղավ բռնի ուժով ճանապարհի բանալ մարդկային այդ անտառի միջով, որպեսզի կարողանա դեպի Բերեզինան հասցնել այն հինգ հազար քաջերին, որոնց տանում էր կայսրին: Այդ դժբախտները թողնում էին, որ իրենց ճգմեն, տրորեն, միայն թե չշարժվեն: Մեռնում էին լռությամբ, ժպտալով իրենց հանգչող խարույկներին և առանց մտածելու Ֆրանսիայի մասին...

Երեկոյան ժամը 10-ին միայն, մարշալ Վիկտորը գետի մյուս կողմն էր գտնվում: Զանբեն տանող կամուրջներն անցնելուց առաջ նա գեներալ Էրլեյին⁹ վստահեց Ստուդիանկայի վերջապահ զորամասի բախտն ու ճակատագիրը: Այդ գեներալն ազատարարն էր բոլոր նրանց, ովքեր վերապրեցին Բերեզինայի աղետից հետո: Այդ մեծ գեներալը, որին հետևում էր արիասիրտ մի սպա, մոտավորապես գիշերվա կեսին, լքեց կամրջի մոտ զբաղեցրած իր փոքրիկ հյուղակը և սկսեց դիտել այն տեսարանը, որ ներկայացնում էր Բերեզինայի ափին, Բորիսովից մինչև Ստուդիանկա տանող ճանապարհի միջև տարածվող ճամբարը: Ռուսական թնդանոթները դադարել էին որոտալուց: Անհամար խարույկներ, որոնք այդ ձյան կույտի միջում արդեն դժգունում էին և աղոտ առկայծումով այս ու այնտեղ լուսավորում էին դեմքեր, որոնք մարդկային ոչինչ չունեին այլևս: Այնտեղ գտնվում էին Եվրոպայի զանազան ազգություններից երեսուն հազար դժբախտներ, որոնց Նապոլեոնը նետել էր Ռուսաստանի վրա և նրանք այժմ անասնական անհոգությամբ խաղում էին իրենց կյանքի հետ:

— Փրկե՛նք այս բոլորին,— ասաց գեներալը սպային:— Վաղը առավոտ ռուսները կտիրեն Ստուդիանկային: Հետևաբար այն պահին, երբ նրանք հայտնվեն, պետք կլինի այրել կամուրջը,

այսպէս ուրեմն, արիություն, բարեկա՛մա: Ասա՛ գէներալ Ֆուրնիէին, որ հազիվ ժամանակ ունի լքելու իր դիրքը, ճամփա բանալու այս մարդկանց միջով և անցնելու կամուրջը: Եվ, երբ նա կշարժվի, կհետևես նրան: Մի քանի քաջառողջ մարդկանց օգնությամբ անխնա կայրես բոլոր բացօթյա ռազմաճամբարները, փոխադրական բոլոր միջոցները՝ պարենասարերը, կառքերը և ամեն ինչ: Կամուրջի վրա քշիր բոլոր այդ մարդկանց: Հարկադրի՛ր բոլորին, ովքեր դեռ ուժ ունեն քայլելու, ապաստանել մյուս ափում: Այժմ մեր վերջին ապավենը հրդեհն է: Եթե Բերթին¹⁰ ինձ թույլատրեր ոչնչացնել այս անիծյալ փոխադրական սարքերը՝ այս գետը իմ կամրջագորայիններից բացի ոչ ոքի չէր կլանի, այն հիսուն անձնագոհ հերոսները, որոնք փրկեցին բանակը և որոնց մոռանալու են...

Գէներալը ձեռքը տարավ ճակատին և մնաց լուռ:

Նա զգում էր, որ Լեհաստանը պիտի լիներ իր գերեզմանը, և ոչ մի ձայն պիտի չբարձրանար ի նպաստ այդ վեհ ու գերազնիվ մարդկանց, որոնք մնացին ջրի մեջ, Բերեզինայի ջրի մեջ, այդտեղ կամուրջների հենակները տեղավորելու համար: Նրանցից մեկն է միայն ողջ մնացել, կամ ավելի ճիշտ կլիներ ասել, տառապում է մի գյուղում մոռացված ու անծանոթ: Համհարզը մեկնեց: Բայց հազիվ թե այս վեհանձն սպան հարյուր քայլ էր միայն հեռացել դեպի Ստուդիանկա, երբ գէներալ Էրլեն զարթեցրեց իր հիվանդ կամրջագորայինների մեծ մասը և սկսեց իր մարդասիրական գործը, այրելով կամրջի շուրջը հաստատված բացօթյա ռազմաճամբարները, և այդպիսով ստիպելով իրեն շրջապատող քնած մարդկանց, որ անցնեն Բերեզինան:

Այդ ժամանակ համհարզը, ոչ առանց դժվարության հասավ այն միակ փայտե տնակին, որը դեռևս կանգուն էր մնացել Ստուդիանկայում:

— Այս բարակում շա՛տ մարդիկ կան, ընկե՛ր,— հարցրեց նա մի մարդու, որին նկատեց դրսում:

— Ճարպիկ զինվոր կլինեիք, եթե կարողանաք մտնել այնտեղ,— պատասխանեց սպան, առանց շուտ գալու, շարունակելով իր թրով քանդել տան տախտակները:

— Այդ դո՞ւք եք, Ֆիլիպ,— ասաց համհարզը, ձայնից ճանաչելով իր բարեկամներից մեկին:

— Այո՛, ...Ա՛հ, ա՛հ, այդ դո՞ւ ես բարեկամս,— պատասխանեց պարոն դը Մյուսին, նայելով համհարզին, որն ինչպես ինքը, հազիվ քսաներեք տարեկան էր:— Ես կարծում էի, որ դու արդեն այս նգովյալ գետի մյուս ափումն ես: Ի՛նչ է, չլինի՞ թե մեր աղանդների համար գաթա ու քաղցրեղեն ես բերել: Այդ դեպքում լավ կընդունվես,— ավելացրեց նա, պոկելով փայտի կեղևը, որը որպես կեր՝ տալիս էր ձիուն:

— Ես փնտրում եմ ձեր հրամանատարին, գէներալ Էրլեյի կողմից նախագգուշացնելու համար նրան, որ պետք է նահանջել Ջամբենի վրայով: Դուք հազիվ թե ժամանակ ունենաք կտրել անցնելու դիակների այս մասսան, որը ես շուտով հրդեհելու եմ, որպեսզի ստիպեմ նրանց քայլել...

— Դու ինձ գրեթե ջերմացնում ես. քո հայտնած այդ նորությունը քրտնեցնում է ինձ: Երկու բարեկամ ունեմ, որոնց պետք է փրկեմ: Նրանց համար եմ խնամում ձիս և չեմ ուտում նրան: Ի դե՛պ, շնո՛րհ արա՛, մի կտոր չոր հաց չունե՞ս: Ահա երեսուն ժամ է, որ ոչինչ չեմ դրել բերանս, թեև կովել եմ կատաղածի նման, որպեսզի անվթար պահեմ այն մի քիչ ջերմությունն ու կորովը, որ մնում են ինձ:

— Խե՛ղճ Ֆիլիպ, ոչի՛նչ... ոչի՛նչ... Սակայն ձեր գէներալն այնտե՞ղ է...

— Մի՛ փորձիր մտնել: Այս հարդանոցում մեր վիրավորներն են: Բարձրացի՛ր մի քիչ ավելի վեր, աջիդ վրա կհանդիպես մի տեսակ խոզանոցի, գեներալն այնտեղ է: Մնաս բարով, իմ քաջ: Եթե երբեք մի օր պարենք Փարիզի մի պարկետի վրա... Նա չավարտեց իր խոսքը, քամին այդ միջոցին փչեց մի այնպիսի ուժգնությամբ, որ համհարզը չսառչելու համար սկսեց քայլել, իսկ մայոր Ֆիլիպի շրթները սառեցին: Շուտով լռություն տիրեց: Այն ընդհատվում էր միայն այդ տնակից լսվող հեծեճանքներով, և այն խուլ աղմուկով, որ պարոն դը Սյուսիի ձին էր հանում քաղցածությունից ու մոլեգնությունից՝ կրծոտելով սառած կեղևները ծառերի, որոնցով կառուցված էր տնակը: Մայորը իր թուրը տեղավորեց պատյանի մեջ, հանկարծ բռնեց թանկագին կենդանու սանձը, կենդանի, որին կարողացել էր մինչ այդ անվտանգ պահել, և հակառակ նրա դիմադրությանը, պոկեց նրան իր ողորմելի կերից, որը ձիու համար համադամ էր:

— Ճանապարհ ընկնենք, Բիշե՛տ, ճանապա՛րհ: Միայն դու ես, անուշիկս, որ կարող ես փրկել Ստեֆանիին: Գնա՛, դրանից հետո մեզ կթույլատրվի հանգստանալ, մեռնել անկասկած:

Ֆիլիպը, փաթաթված իր մուշտակով, որին նա պարտական էր իր գոյությունն ու կորովը, սկսեց արագորեն վազել, ոտները խփելով կարծրացած ձյանը, իր ջերմությունը վառ պահելու համար: Հազիվ թե մայորը մի հինգ հարյուր քայլ էր ընթացել, երբ նկատեց մի ահագին խարույկ այնտեղ, որտեղ առավոտից մի ծեր զինվորի հսկողության տակ թողել էր կառքը: Մի սուսկալի մտատանջություն համակեց նրան: Բոլոր նրանց նման, որոնք այդ խուճապահար փախուստի ընթացքում համակվեցին մի հզոր զգացումով, նա իր մեջ գտավ այնպիսի ուժեր իր բարեկամներին օգնելու, որ երբեք չպիտի ունենար իր անձի փրկության համար: Նա շուտով հասավ հողից կազմված մի խորշի, որի խորքում արկերից ապահովել էր մի դեռատի կնոջ՝ իր մանկության ընկերուհուն:

Կառքից մի քանի քայլ հեռու, երեսունի մոտ ետ մնացող զինվորներ հավաքվել էին մի մեծ խարույկի շուրջը, որը վառ էին պահում անդադար, նրա մեջ նետելով արկոններից, անիվների և կառքերի վրայից պոկված տախտակներ: Այդ զինվորները, անտարակույս, բոլորից հետո եկածներից էին, որոնք Ստուդիանկայի ստորին մասում գծված գետնի լայն ակոսից մինչև ճակատագրական գետը կազմում էին զլուխների, խարույկների և բարակների մի օվկիանոս, զրեթե անզգա շարժումներից ալեկոծված կենդանի մի ծով, որտեղից դուրս էր պրծնում խուլ աղմուկ՝ սարսափելի պայթյունների հետ խառը: Այդ դժբախտները հուսալքումից և քաղցից մղված, հավանաբար բռնությամբ խուզարկել էին կառքը:

Ծեր գեներալը և դեռատի կինը, որոնց գտան կառքի մեջ, պառկած կապոցների վրա, այժմ մուշտակյա վերարկուների մեջ փաթաթված, անշարժ նստել էին խարույկի առջև: Կառքի դռնակներից մեկը ջարդված էր:

Խարույկի շուրջը տեղավորված մարդիկ հենց որ լսեցին մայորի ձիու սմբակների աղմուկը, քաղցի մոլեգնությունից բռնված, սկսեցին աղմկել.

— Ձի՛, ձի՛...

Բոլոր ձայները միախառնվեցին:

— Ե՛տ քաշվեցեք, զգուշացե՛ք,— բղավեցին երկու-երեք զինվոր՝ նշան բռնելով ձիուն: Ֆիլիպը կանգնեց իր ձիու առաջ, սպառնալով.

— Ստահակնե՛ր, ես ձեզ բոլորիդ թավալզոր կփռեմ ձեր խարույկի մեջ: Այնտեղ վերևում ընկած ձիեր կան, գնացե՛ք, բերեք:

— Այդ սպան խեղկատակի մեկն է... մեկ, երկու, անցնո՞ւմ ես մի կողմ, թե ո՛չ,— վրա բերեց մի հսկա գրենադեր:

— Ո՛չ, է՛հ, լա՛վ, ինչպես ուզում ես:

Պայթյունի վրա լսվեց կանացի ճիչ: Բարեբախտաբար գնդակը Ֆիլիպին չդիպավ, բայց Բիշետը տապալվեց գետին և մաքառում էր մահվան դեմ: Երեք հոգի անմիջապես նետվեցին խեղճ անասունի վրա ու սվիններով խոցոտեցին:

— Մարդակերներ՛ը,— ասաց Ֆիլիպը խիստ հուզված,— թողե՛ք գոնե ծածկոցս և ատրճանակներս վերցնեմ:

— Վերցրո՛ւ քո ատրճանակները,— պատասխանեց գրենադերը,— իսկ ինչ վերաբերում է ծածկոցին, ահա մի հետևակ, որ երկու օր է, ինչ լապտերում ոչինչ չունի՝ և ցրտից դողդողում է իր մաշված հագուստի մեջ: Այդ մեր գեներալն է:

Ֆիլիպը լռեց, տեսնելով մի մարդու, որի կոշիկները մաշված և շալվարը տասը տեղից ծակծկված էր, իսկ գլխին կար եղյամով ծածկված զինվորական անպետք գլխարկ: Նա շտապեց վերցնել իր ատրճանակները: Հինգ հոգի ձին տարան խարույկի առաջ և սկսեցին կտրտել այնքան ճարպկորեն, ինչպիսի ճարպկությամբ այդ կանեին Փարիզի մսագործները: Մինչ այդ, մայորը գնաց և տեղավորվեց դեռատի կնոջ կողքին, որը ճանաչելով նրան, սարսափի մի ճիչ էր արձակել: Մայորը նրան գտավ անշարժ վիճակում, նստած՝ կառքից բերված Բարձիկներից մեկի վրա, տաքանալիս: Կինը, առանց ժպտալու, լուռ նայեց նրան: Ֆիլիպը այդ պահին իր մոտ նկատեց այն զինվորին, որին վստահել էր կառքի պահպանությունը: Խեղճ մարդը վիրավորված էր: Թվական առավելությունից ընկճվելով, տեղի էր տվել այդ ետ մնացող զինվորների առաջ, որոնք հարձակվել էին նրա վրա: Բայց, ինչպես մի շուն, որը մինչև վերջին րոպեն պաշտպանել էր իր տիրոջ ճաշը, այնուամենայնիվ, ավարից վերցրել էր իր Բաժինը, և սպիտակ մահուդից իր համար հարմարեցրել մի տեսակ վերարկու: Այդ րոպեին նա զբաղված էր կրակի վրա ձիու մսի կտորը դարձնելով, և մայորը նրա դեմքի վրա գոհունակություն նկատեց, որն առաջ էր եկել խնջույքի պատրաստություններից: Իսկ կոմս դը Վանդիերը, որը երեք օրից ի վեր գտնվում էր ցնդած վիճակում, իր կնոջ կողքին բարձի վրա նստած, սևեռուն աչքով նայում էր խարույկի բոցերին, որոնց ջերմությունը սկսում էր ցրել նրա թմրությունը: Նա վտանգից ու Ֆիլիպի վրա հասնելուց այնքան չէր հուզվել, որքան այն մարտից, որին հաջորդեց իր կառքի կողոպուտը: Նախ դը Սյուսին բռնեց երիտասարդ կոմսուհու ձեռքը, կարծես ցանկանալով նրան սիրո և նվիրվածության ապացույց տալ, և արտահայտելու իր զգացած վիշտը՝ նրան այդպես հետին թշվառության մատնված տեսնելու համար, բայց նա լուռ մնաց նրա կողքին, նստեց ձյան կույտի վրա, որ հավելելով հոսում էր, և ինքն էլ անձնատուր եղավ տաքանալու երջանկությանը, մոռանալով և՛ վտանգը, և՛ ամեն ինչ: Նրա դեմքը, ակամա, ստացավ համարյա հիմար ուրախության արտահայտություն: Եվ նա անհամբեր սպասեց, որ ձիու պատառը, որ տվել էր իր զինվորին, խորովվի: Ածխացած մսի բուրմունքը գրգռում էր նրա քաղցը և քաղցածությունը լրության էր դատապարտում և՛ նրա սիրտը, և՛ նրա քաջությունը, և թե սերը: Առանց զայրույթի դիտեց իր կառքի կողոպուտի արդյունքները: Խարույկը շրջապատող բոլոր մարդիկ իրենց միջև բաժանել էին կոմսին, կնոջը և մայորին պատկանող ծածկոցները, բարձերը, մուշտակները, շրջագգեստները և տղամարդու կամ կանացի բոլոր հագուստները: Ֆիլիպը շուտ եկավ տեսնելու համար, թե արդյոք կարելի՞ էր դեռևս օգտվել կառքի արկղից: Նա խարույկի բոցերի ցուլքի տակ նկատեց ոսկին, ադամանդները, արծաթեղենը, ցրված այս ու այն կողմ, և ոչ մեկը չէր մտածում նվազագույն մասնիկն իսկ սեփականացնելու մասին: Այդ կրակի շուրջը ըստ բախտի հավաքված

* Ժողովրդական արտահայտություն, այսինքն՝ ստամոքսը դատարկ է:

մարդկանցից յուրաքանչյուրը պահպանում էր այնպիսի մի լռություն, որն իր մեջ ուներ ինչ-որ աղետալի բան և անում էր այն, ինչ անհրաժեշտ էր համարում իր հանգստավետության համար: Այս թշվառությունը արտառոց էր, անհեթեթ: Յրտից ավերված ու այլանդակված դեմքերը ծեփված էին ցեխի մի խավով, որի վրա արցունքները թողել էին հետքեր, աչքերից մինչև այտերը, մի ակոս, որ հաստատում էր այդ դիմակի թանձրությունը: Նրանց երկար մորուքի անմաքրությունն է՛լ ավելի ժանտատեսիլ էր դարձնում այդ զինվորներին: Նրանցից ոմանք փաթաթվել էին կանացի շորերի, շալերի մեջ, իսկ ուրիշները կրում էին ձիերի թաղիքներ, ցեխոտված ծածկույթներ, հալչող եղյամով ծածկված ցնցոտիներ: Ոմանք մի ոտքին հագել էին երկարաճիտ կոշիկ, իսկ մյուսին՝ սովորական ոտնաման: Վերջապես, չկար որևէ մեկը, որի հագուստը որևէ ծիծաղելի առանձնահատկություն չունենար: Այդքան ծիծաղելի բաների առկայությամբ այս մարդիկ մնում էին լուրջ ու մռայլ: Լռությունը ընդհատվում էր միայն փայտերի ճարճատյունով, բոցերի ճայթյուններով, ճամբարի հեռավոր մրմունջով և սրի հարվածներով, որ ամենից ավելի քաղցածները տալիս էին Բիշետին, նրանից լավագույն կտորներ պոկելու համար: Ուրիշ դժբախտներ, ավելի պարտասած և թույլ, քան մյուսները, քնել էին և եթե նրանցից մեկն ու մեկը խարույկի մեջ թավալվելու և այրվելու վտանգի տակ գտնվեր, ոչ ոք չէր մտածի նրան բարձրացնել: Այս խստաբարո տրամաբանողները մտածում էին, որ եթե նա արդեն չէր մեռել, մարմնի այրվածքը նրան անպայման կստիպեր ավելի հարմարավետ տեղ գտնել: Եթե այդպիսի մի դժբախտ զարթներ կրակի մեջ և կորչեր կրակի մեջ, ոչ ոք նրան չէր կարեկցի: Այդ զինվորներից մի քանիսը միմյանց նայում էին ասես արդարացնելու համար իրենց սեփական անհոգությունը՝ ուրիշների անտարբերությամբ: Դեռատի կոմսուհին երկու անգամ ականատես եղավ այդպիսի տեսարանի, սակայն լուռ մնաց: Երբ զանազան պատառները, որ դրել էին կրակի վրա, խորովվեցին, յուրաքանչյուրը հագեցրեց իր քաղցը այնպիսի մի որկրամոլությամբ, որ եթե տեսնենք անասունների մոտ, մեզ չափազանց զգվելի կրվա:

— Ահա առաջին անգամն է, որ երեսուն հետևակ նստել են մի ձիու վրա,— բացականչեց գրենադերը, որն սպանել էր ձիուն:

Սա միակ կատակն էր, որ ի հայտ բերեց ազգային ոգին:

Շուտով, այս խեղճ զինվորներից շատերը փաթաթվեցին իրենց հագուստներով, տեղավորվեցին տախտակների, և այն ամեն ինչի վրա, որ կարող էր նրանց հեռու պահել ձյան հետ շփումից և քնեցին, բոլորովին անհոգ՝ հաջորդ օրվա նկատմամբ: Երբ մայրը տաքացավ ու հագեցրեց իր քաղցը, քնելու անհաղթահարելի պահանջը ծանրացրեց նրա կոպերը: Քնի դեմ իր կարճատև պայքարի ընթացքում նա հիացմունքով դիտեց այդ դեռատի ու գեղեցիկ կնոջը, որը դեմքը դարձրել էր դեպի խարույկը՝ քնելու համար: Այդ թույլ էր տալիս տեսնել նրա փակ աչքերը և ճակատի մի մասը: Նա փաթաթված էր մուշտակավոր մի վերարկուով, բացի այդ, կրում էր նաև զինվորական կոպիտ վերարկու: Նրա գլուխը հանգչում էր արյան բծեր ունեցող բարձի վրա, Աստրախանի մի գլխանոց՝ կզակի տակից կապված թաշկինակով ամրացած, նրա դեմքը ըստ կարելվույն պաշտպանում էր ցրտից, իսկ ոտքերը թաքցրել էր վերարկուի մեջ: Այսպես ինքն իր վրա կծկված, իսկապես ոչ մի բանի չէր նմանվում: Միթե սա՞ էր իրոք Վիվանդիերների վերջին շառավիղը, միթե սա՞ էր այն հրապուրիչ կինը՝ փարիզյան պարահանդեսների թագուհին: Ավա դ, մինչև անգամ իր ամենաանձնվեր բարեկամի աչքը՝ սպիտակեղենի և ցնցոտիների այդ կույտի մեջ կանացի ոչինչ չպիտի նկատեր նրա մեջ... Աչքերի վրա փովող անդիմադրելի քնի ամենաթանձր քողերի միջով, մայրը այդ կնոջն ու նրա ամուսնուն տեսնում էր միայն որպես երկու կետեր: Խարույկի բոցերը, շուրջը փոված այդ դեմքերը, սարսափելի այդ ցուրտը, որ խուսափուկ տաքությունից երեք քայլ հեռու ոռնում էր, այդ ամենը երազ էր: Հոգեմաշ մի մտածում սարսափեցնում էր նրան.

«Բոլորս կմեռնենք, եթե ես քնեմ, չեմ ուզում քնել»,— ասում էր նա ինքն իրեն:

Այնուամենայնիվ նա քնեց: Մի ժամ քնելուց հետո, մի ահռելի վայնասուն և մի պայթյուն զարթեցրին պարոն դը Սյուսիին: Պարտականության գիտակցությունը և իր բարեկամուհուն սպառնացող կորստյան վտանգը ծանրացան նրա խղճի վրա: Նա արձակեց մոնչյունի նմանող մի ճիչ: Միայն ինքը և իր զինվորն էին ոտքի վրա: Նրանք տեսան կրակի մի ծով, որ մասնատում էր իրենց առաջ, գիշերային խավարում, մարդկանց մի բազմություն, լափելով և՛ բացօթյա ռազմաճամբարները, և՛ հյուղակները: Նրանք լսեցին հուսահատության ճիչեր, ռոնոցներ, նշմարեցին հազարավոր վշտահար, անհանգիստ և կատաղած դեմքեր: Այս դժոխքի միջով զինվորների մի շարասյուն երկու կողմի վրա ընկած դիակների միջով իր համար ճանապարհ էր բացում դեպի կամուրջը:

— Մեր վերջապահ գործառնի նահանջն է,—բացականչեց մայորը: Այլևս ո՛չ մի հույս:

— Ես խնայեցի ձեր կառքը, Ֆիլիպ,— ասաց ծանոթ մի ձայն: Շուտ գալով, Սյուսին բոցերի շողերի շնորհիվ ճանաչեց երիտասարդ համհարզին:

— Ա՛հ, ամեն ինչ կորավ,— պատասխանեց մայորը:— Նրանք կերան իմ ձին: Բացի այդ, ինչպե՞ս պիտի կարողանամ քայլեցնել այդ ապուշ գեներալին ու իր կնոջը:

— Վերցրե՛ք կիսավառ մի կոճղ, Ֆիլի՛պ, և սպառնացե՛ք դրանց:

— Սպառնալ կոմսուհո՞ւն...

— Մնաք բարո՛ւ,— գոչեց համհարզը:— Հագիվ ժամանակ ունեմ անցնելու այս չարաղետ գետը, և այդ անհրաժեշտ է, մայրս Ֆրանսիայում է... Ի՛նչ գիշեր: Այս ամբոխը նախընտրում է մնալ ձյան վրա և այս դժբախտների մեծ մասը հանդուրժում է այրվել, քան վեր կենալ... Ժամը չորսն է, Ֆիլիպ: Երկու ժամ հետո ռուսները կսկսեն շարժվել: Վստահեցնում եմ, որ դուք Բերեզինան մի անգամ էլ կտեսնեք դիակներով ծածկված: Ֆիլի՛պ, հոգացե՛ք ձեր մասին: Դուք ձիեր չունեք և չեք կարող կոմսուհուն տանել, ուստի գնանք, եկե՛ք ինձ հետ,— ասաց նա բռնելով նրա թևից:

— Բարեկամս, լքել Ստեֆանիի՛ն...

Մայորը բռնեց կոմսուհուն, ոտքի հանեց նրան և հուսահատ մարդու կոպտությամբ ցնցելով նրան, ստիպեց զարթնել: Կոմսուհին նայեց նրան սևեռուն ու մեռած աչքերով:

— Հարկավոր է քայլել, Ստեֆանի՛, այլապես մենք կմեռնենք այստեղ:— Պատասխանի փոխարեն կոմսուհին փորձում էր նորից ընկնել գետնի վրա քնելու համար: Համհարզը կիսավառ մի կոճղ վերցրեց և շարժեց Ստեֆանիի դեմքի առաջ:

— Փրկենք նրան, հակառակ իրեն,— ասաց Ֆիլիպը վերցնելով կոմսուհուն, որին տարավ կառքի մեջ տեղավորեց: Ետ դարձավ և խնդրեց իր բարեկամի օգնությունը: Երկուսը միասին վերցրին ձեր գեներալին, առանց իմանալու, ո՞րը էր, թե մեռած և տեղավորեցին իր կնոջ կողքին: Մայորը ոտքի հարվածով գլորեց գետնի վրա փովածներին, վերցրեց նրանցից ինչ-որ թալանել էին, բոլոր զգեստեղենները դիզեց երկու ամուսինների վրա և իր ձիու մսից խորովված մի քանի կտոր նետեց կառքի մի անկյունը:

— Ի՞նչ եք ուզում անել,— հարցրեց նրան համհարզը:

— Քաշելով տանել կառքը,— պատասխանեց մայորը:

— Խենթացե՛լ եք:

— Այդ ճիշտ է,— գոչեց Ֆիլիպը, թևերը կրծքի վրա խաչաձևելով: Հանկարծ կարծես մի հուսահատ վճիռ կայացրեց:

— Քեզ,— ասաց նա, բռնելով իր զինվորի առողջ թևից,— քեզ եմ վստահում նրան մի ժամով: Մտածի՛ր, որ պետք է մեռնես, քան թե թողնես մեկին մոտենալ այս կառքին:

Մայորը վերցրեց կոմսուհու ադամանդները, մի ձեռքով բռնեց դրանք, իսկ մյուսով քաշեց սուրը, սկսեց կատաղորեն հարվածել բոլոր այն քնածներին, որ համարում էր ամենից աներկյուղները և հաջողվեց զարթեցնել հսկայակերպ գրենադերին և երկու ուրիշ մարդկանց, որոնց աստիճանը ճանաչել դժվար էր:

— Մենք **կորած ենք**,— ասաց նրանց:

— Այդ լավ գիտեմ,— պատասխանեց գրենադերը,— բայց ինձ համար միևնույնն է:

— Է՛հ, ուրեմն, քանի որ ակնհայտ է մեռնելը, ավելի լավ չէ՞ր լինի ծախել կյանքը մի գեղանի կնոջ համար և փորձել դարձյալ տեսնել Ֆրանսիան...

— Ես ավելի սիրում եմ քնելը,— ասաց մեկը թավալվելով ձյան վրա,— և եթե դու ինձ նորից անհանգստացնես, մայո՛ր, թուրս կխցկեմ քո փորի մեջ:

— Ինչո՞ւմն է բանը, պարոն սպա,— վերսկսեց գրենադերը:— Այդ մարդը հարբած է և փարիզցի: Նա սիրում է իր հանգիստը:

— Այս կլինի քոնը, քա՛ջ գրենադեր,— գոչեց մայորը նրան ներկայացնելով ադամանդակուտ մի մանյակ,— եթե դու ուզես հետևել ինձ և կովել դիվախարի նման: Ռուսները այստեղին շատ մոտ են, նրանք լավ ձիեր ունեն, մենք կհարձակվենք նրանց առաջին մարտկոցի վրա և կբերենք երկու ձի:

— Բայց պահակնե՞րը, մայո՛ր...

— Մեզնից մեկը կընկնի...,— ասաց նա զինվորին, լռեց, նայեց համհարզին:

— Դուք կգաք, Իպպոլիտ, այնպես չէ՞:

Իպպոլիտը գլխի շարժումով հայտնեց իր համաձայնությունը:

— Մեզնից մեկը,— շարունակեց մայորը,— կգբադվի պահակով: Բացի այդ, գուցե նրանք՝ ռուսները, նույնպես քնած են...

— Գնա՛, մայո՛ր, դու քաջ ես: Սակայն ինձ կվերցնես կառքի մեջ,— ասաց գրենադերը:

— Այո՛, եթե մորթոյ այնտեղ չթողնես, եթե ես մեռնեմ, Իպպոլի՛տ և դո՛ւ, գրենադե՛ր,— ասաց մայորը, խոսքն ուղղելով իր ընկերներին,— Խոստանո՞ւմ եք ինձ, ձեզ զոհել կոմսուհու փրկության համար:

— Համաձայն ենք,— գոչեց գրենադերը:

Նրանք ուղղվեցին դեպի ռուսական գիծը, մարտկոցների վրա, որոնք այնքան դաժանորեն ու անգթությամբ շանթահարել էին գետի ափին ընկած դժբախտների մասսային: Իրենց մեկնելուց մի քանի րոպե հետո ձյան վրա արձագանքեց երկու ձիերի վարգելու ձայնը: Իսկ զարթնած մարտկոցը գնդակների հաջորդական կարկուտ էր տեղում, որոնք անցնում էին քնածների գլխի վերևով: Ձիերի քայլերն այնքան սրընթաց էին, որ կարծես պայտարները երկաթ էին ծեծում: Վեհանձն համհարզը

զոհ գնաց... ըմբշական գրենադերը ողջ-առողջ էր: Ֆիլիպը, իր բարեկամին պաշտպանելիս ուսի վրա ստացել էր սվինի հարված, այնուամենայնիվ նա փաթաթվեց ձիու բաշին և նրան այնպես էր սեղմում իր սրունքներով, որ կարծես կենդանին գտնվում էր մամլակի մեջ:

— Օրհնյա՛լ է աստված,— բացականչեց մայորը, նորից տեսնելով իր զինվորին՝ անշարժ և կառքն էլ իր տեղում:

— Եթե դուք արդարությունը սիրող եք, պարո՛ն սպա, դուք ինձ պարգևատրել կտաք Պատվո խաչով: Մենք պատվականորեն նվագեցինք նրբասրինգն ու կեռ թուրը, այնպես չէ՞:

— Մենք դեռևս ոչինչ չենք արել: Լծենք ձիերը: Բռնե՛ք այս պարանները:

— Բավականաչափ պարան չունենք:

— Դե՛ լավ, գրենադե՛ր, օգնեցե՛ք ինձ այս քնածներին շրջելու և գործածեցեք նրանց շալերն ու սպիտակեղենը...

— Վա՛յ, այս խեղկատակը մեռած է,— բացականչեց գրենադերը, մերկացնելով առաջին պատահածին, որի կողմն էր ուղղվել... Ա՛հ, այս բոլոր խեղկատակները մեռած են:

— Բոլո՞րը:

— Այո՛, բոլորը: Երևում է, որ ձին դժվարամարս է, երբ ուտում են ձյան մեջ:

Այդ խոսքերը հարկադրեցին սարսռալ Ֆիլիպին: Ցուրտը սաստկացել էր: Մայորը ցնցեց կոմսուհուն՝ գոչելով.

— Ստեֆանի՛, Ստեֆանի՛...

Դեռատի կինը բացեց աչքերը:

— Տիկի՛ն, մենք փրկված ենք:

— Փրկվա՛ծ,— կրկնեց նա, նորից ընկնելով:

Ձիերին մի կերպ լծեցին: Մայորը իր առողջ ձեռքով բռնելով սուրը, իսկ մյուսով պահելով երասանակները, զինված իր ատրճանակներով, հեծավ ձիերից մեկի վրա, իսկ գրենադերը՝ երկրորդի վրա: Ծեր զինվորը, որի ոտները սառել էին, փռվել էր կառքի մեջ, գեներալի և կոմսուհու վրա: Ձիերը, սրի հարվածներից խթանվելով, կատաղությամբ տարան կառքը դաշտի միջով, որտեղ անհամար դժվարություններ էին սպասում մայորին: Շուտով անհնար դարձավ առաջանալ, եթե չէին ուզում ճխլել քնած տղամարդկանց, կանանց և մինչև անգամ երեխաներին, որոնք հրաժարվում էին շարժվել, երբ գրենադերը զարթեցնում էր դրանց: Բզուր պարոն դը Մյուսին փնտրեց այս մարդկային զանգվածի միջով վերջապահ գորամասի քիչ առաջ բացած անցքը, որը ջնջվել էր այնպես, ինչպես ծովի վրայով առագաստանավի հետքն է ջնջվում: Նա գնում էր դանդաղորեն և նրան հաճախ կանգնեցնում էին զինվորները, որոնք սպառնում էին սպանել ձիերին:

— Ուզո՞ւմ եք հասնել,— ասաց նրան գրենադերը:

— Ամբողջ արյանս գնով, նույնիսկ բովանդակ աշխարհի գնով,— պատասխանեց մայորը:

— Շարժվի՛ր... Ձվածեղ չի կարելի ուտել ձուն չկոտրած: Եվ պահակագործի գրենադերը քշեց ձիերն ուղղակի մարդկանց վրա, արյունոտեց անիվները, շուտ տվեց բացօթյա ռազմաճամբարները՝ մեռելների գույգ ակոսներ բացելով գլուխների այդ դաշտում: Բայց, արդարացի լինելու համար, ասենք, որ նա երբեք չէր դադարում որոտագին ձայնով գոռալուց:

— Դե՛, զգուշացե՛ք, լեշե՛ր:

— Դժբախտնե՛ր,— գոչեց մայորը:

— Բա՛հ, սա՛ կամ ցուրտը, սա՛ կամ թնդանոթը, միևնույնը չէ՞,— ասաց գրենադերը, գրգռելով ձիերին և նրանց խթանելով իր կարճ սրի ծայրով:

Մի աղետ, որ կարող էր նրանց պատահել ավելի շուտ, և որ առասպելական մի դիպված նրանց մինչ այդ զերծ էր պահել, իսկույն վրա հասավ և կանգնեցրեց նրանց ընթացքը: Կառքը շուտ եկավ:

— Սպասում էի դրան,— գոչեց անհողորդ գրենադերը: Օ՛հ, օ՛հ, մեր ընկերը մեռավ:

— Խե՛ղճ Լորան,— ասաց մայորը:

— Լորա՛ն... Հեծյալ թեթևագորաց հինգերորդ վաշտից չէ՞:

— Այո՛:

— Իմ հորեղբորորդին է... Բա՛հ, մեր այս զգվելի կյանքն այնքան էլ երջանիկ չէ, որ հիմա ավստոսանք այն:

Կառքը բարձրացվեց, հնարավոր եղավ ձիերը ոտքի հանել ահագին ժամանակի անդառնալի կորուստով: Ընդհարումն այնքան ուժգին էր եղել, որ երիտասարդ կոմսուհին ցնցումից ու ընդարմացումից սթափված՝ մի կողմ նետեց իր ծածկույթները և վեր կացավ:

— Ֆիլի՛պ, որտե՞ղ ենք մենք,— հարցրեց նա մեղմ ձայնով և նայելով իր շուրջը:

— Կամուրջից մի հինգ հարյուր քայլ հեռու: Անցնելու ենք Բերեզինան: Գետի մյուս ափում, Ստեֆանի, այլևս չեմ տանջելու ձեզ, կթողնեմ քնել, կլինենք ապահովության ու անվտանգության մեջ, հանդարտորեն կհասնենք Վիլնո: Տա՛՛ աստված, որ դուք երբեք չիմանայիք, թե ի՛նչ արժեք ձեր կյանքը:

— Վիրավորվա՞ծ եք:

— Այդ ոչինչ:

Աղետի ժամը հասել էր: Ռուսական մարտկոցի թնդանոթները ազդարարեցին լուսաբացը: Նրանք Ստոլիխանկայի տեր դառնալով՝ շանթալոծեցին դաշտը: Եվ առավոտյան լույսի առաջին շողերի հետ, մայորը բարձունքների վրա նկատեց նրանց զորասյուների շարժումը և դասավորումը: Տագնապի աղաղակ բարձրացավ բազմության մեջ, որը մի ընդհանուր ոտքի կանգնեց: Յուրաքանչյուրը բնագդաբար իրեն սպառնացող վտանգն զգաց և բոլորը հսկայական ալիքի շարժումով ուղղվեցին դեպի կամուրջը: Ռուսները հրդեհի արագությամբ իջնում էին: Տղամարդիկ, կանայք, երեխաներ, ձիեր՝ բոլորը շարժվեցին դեպի կամուրջը: Գետերալ Էրլեն հրդեհել էր տվել մյուս ափի կամրջակալները: Հակառակ այն նախազգուշացումներին, որ տրվում էին փրկարար անցարանի վրա խուժողներին, ոչ ոք սակայն չուզեց ընկրկել: Մարդկանցով ծանրաբեռնված կամուրջը ջրասույգ եղավ: Դեպի գետակի այդ չարաղետ բարձունքը նետվող մարդկանց ալիքի

թափը այնքան կատաղի էր, որ մարդկային զանգվածը ձյունակույտի նման գահավիժեց գետի մեջ: Ո՛չ մի ճիշ: Լավեց միայն ջրի մեջ ընկնող մի ահագին քարի ճողփյունի նման խուլ աղմուկ, հետո Բերեզինան ծածկվեց դիակներով: Իսկ նման մահից խուսափելու համար դեպի դաշտը ընկրկողների հետադարձ շարժումը եղավ այնքան բուռն և նրանց բախումը դեպի առաջ շարժվողների հետ այնքան ահավոր, որ բազմաթիվ մարդիկ մահացան շնչահեղձ: Կոմս և կոմսուհի դը Վանդիերներն իրենց փրկության համար պարտական եղան իրենց կառքին: Ձիերը մահամերձների մի ամբողջ բազմություն ճզմել տրորելուց հետո, կորուստի մատնվեցին, ոտնատակ եղան մարդկային մի թաթառից, որը դիմեց դեպի գետափ: Եվ մայորը, և գրենադերը իրենց փրկությունը գտան միայն իրենց ուժի մեջ: Նրանք սպանում էին, չսպանվելու համար: Մարդկային դեմքերով այս ուրագանը, կենդանացած, մարմինների միատեսակ շարժումով կատարվող այս մակընթացությունն ու տեղատվությունը, այն արդյունքն ունեցան, որ Բերեզինայի ափը մի պահ մնաց ամայի: Բազմությունը նետվել էր դաշտի մեջ: Եթե ոմանք բարձր ափից իրենց նետեցին գետի մեջ, այդ ոչ թե գետի մյուս ափը հասնելու հույսով էր, մի ափ, որը իրենց համար Ֆրանսիան էր, այլ նրա համար, որ խուսափեն Սիբիրի անապատներից: Ծայրահեղ հուսահատությունը մի քանի խիզախ մարդկանց համար հանդիսացավ պաշտպանության վահան: Մի սպա սառույցից սառույց ցատկելով, հասավ մինչև մյուս ափը. մի զինվոր հրաշալիորեն սողոսկեց սառցակույտի և դիակների կույտի վրայով: Այս ծովածավալ բազմությունը հասկացավ վերջապես, որ ռուսները չպիտի սպանեին անգեն, թմրած, ապուշ կտրած քսան հազար մարդկանց, որոնք չէին պաշտպանվում և ահա յուրաքանչյուրն ահավոր համակերպությամբ սպասեց իր ճակատագրին: Այնժամ մայորը, գրենադերը, գեներալը և իր կինը մենակ մնացին մի քանի քայլ հեռու այն վայրից, որտեղ գտնվում էր կամուրջը: Այնտեղ էին նրանք, չորսն էլ կանգնած, չորացած աչքերով, լուռ, շրջապատված մի ամբողջ մեռելակույտով: Մի քանի քաջառողջ զինվորներ, մի քանի սպաներ, որոնց՝ հանգամանքները վերադարձրել էին իրենց ամբողջ էներգիան, գտնվում էին նրանց հետ: Այս խումբը, բավականին բազմաթիվ, մոտ հիսուն հոգի էր: Մայորը նկատեց իրենից մի երկու հարյուր քայլ այն կողմ կառքերի անցքի համար պատրաստված կամուրջի ավերակները, որը նախորդ օրը քանդվել էր:

— Մի լա՛ստ կառուցենք,— բացականչեց նա:

Հագիվ էր նա արտասանել այս բառերը, երբ ամբողջ խումբը վազեց դեպի այդ բեկորները: Ու ահա մարդկանց մի ամբողջ սկսեց հավաքել երկաթյա կեռիկներ, փայտի կտորներ, պարաններ և վերջապես լաստի կառուցման համար անհրաժեշտ բոլոր նյութերը: Քսանի չափ սպաներ ու զինվորներ մայորի հրամանով կազմեցին զինված պահակախումբ՝ աշխատանքները հուսահատ հարձակումների դեմ պաշտպանելու համար, որ կարող էր փորձել նրանց ծրագիրը կռահող ամբոխը: Ազատության այն զգացումը, որ ոգևորում է գերիներին և նրանց ներշնչում հրաշքներ գործել, չէր կարող համեմատվել այն ոգևորության հետ, որ այդ միջոցին դրդում էր այդ դժբախտ ֆրանսիացիներին:

— Ահա՛ ռուսներ՛ըր, ռուսներ՛ըր,— աղաղակում էին աշխատողներին՝ նրանց պաշտպանողները:

Եվ ճռճում էին փայտերը, տախտակամածը աճում էր լայնքով, բարձրությամբ, խորությամբ: Գեներալներ, զինվորներ, գնդապետներ, բոլորը կքել էին անիվների, երկաթների և տախտակների ծանրության տակ: Սա Նոյի տապանի կառուցման իրական մեկ պատկերն էր: Իր ամուսնու մոտ նստած դեռատի կոմսուհին ցավով էր դիտում այդ տեսարանը, որովհետև ոչնչով չէր կարողանում օգնել այդ աշխատանքին, թեև պարաններն ամրացնելու համար հանգույցներ էր անում: Վերջապես լաստը պատրաստվեց: Քառասուն հոգի այն իջեցրին գետի ջրերի մեջ. մինչ այդ մի տասնյակ զինվորներ բռնել էին այն պարանները, որոնք ծառայելու էին նավը կառանելու գետի բարձր ափի

մոտ: Հենց որ կառուցողները տեսան իրենց նավակը Բերեզինայի վրա ծածանվելիս, գետափի բարձունքից ահռելի եսապաշտությամբ նետվեցին այնտեղ: Մայորը այդ առաջին շարժման կատաղությունից վախենալով, ձեռքից բռնել էր Ստեֆանին ու գեներալին, սակայն նա սարսռաց, երբ նավակը տեսավ մարդկանցով սևացած, որտեղ մարդիկ սեղմվել էին միմյանց վրա՝ ինչպես թատրոնի պարտերի հանդիսատեսները:

— Վայրենիներ՝ ը,— գոչեց նա,— ես թելադրեցի ձեզ լաստը կառուցելու գաղափարը և ես լինելով ձեր ազատարարը, դուք մերժում եք ինձ մի տեղ տալ:

Անորոշ մի մրմունջ եղավ պատասխանը: Մարդիկ տեղավորված էին լաստի եզերքին և զինված՝ գավազաններով, որ կռթնեցնելով գետափի բարձունքին, դիակների և սառցակույտերի միջով ուժգնորեն առաջ էին մղում լաստը դեպի այն մյուս ափը:

— Սատանան տանի, ձեզ բոլորիդ ջուրը կթափեմ, եթե մայորին և նրա երկու ընկերներին չընդունեք,— գոռաց գրենադերը, բարձրացրեց սուրը, արգելեց մեկնումը, ստիպեց սեղմել շարքերը, հակառակ ահռելի վայնասուններին:

— Հիմա կընկնեմ..., ընկնում եմ...— բղավում էին նրա ուղեկիցները: Մեկնեք, առա՛ջ:

Լաստի վրա տեղավորված այդ մարդկանց դրության մեջ կար կոմիկական ինչ-որ բան: Ինչքան էլ նրանք սոսկալի գոռում-գոչյուններ արձակեցին, այնուամենայնիվ ոչ ոք չհանդգնեց դիմադրել գրենադերին, որովհետև միմյանց այնքան սեղմված էին, որ բավական էր հրել մեկին՝ բոլորին շուտ տալու համար: Այս վտանգավոր դրության մեջ մի կապիտան փորձեց ազատվել այդ զինվորից, որը սակայն նկատեց սպայի այդ թշնամական շարժումը, բռնեց նրան և հրեց ջրի մեջ, ասելով.

— Ա՛հ, ա՛հ, բաղի մեկը, ուզեցիր խմել... դե՛, գնա՛:— Ահա երկու տեղ,— գոչեց նա. դե՛, մայո՛ր, զցե՛ք մեզ ձեր փոքրիկ տիկնոջը և եկե՛ք: Թողե՛ք երիտասարդության հովեր ունեցող այդ ծերունուն, որը վաղը մեռնելու է քաղցից ու ցրտից:

— Շտապեցե՛ք,— գոչեց հարյուր ձայնից բաղկացած մի ձայն:

— Դե՛, մայո՛ր: Սրանք մոթմոթում են և իրավացի են:

Կոմս դը Վանդիերը թեթևացավ իր ցնցոտիներից և կանգնեց գեներալի իր համազգեստով:

— Փրկենք կոմսին,— ասաց Ֆիլիպը:

Ստեֆանին սեղմեց իր բարեկամի ձեռքը...

— Մնաք բարո՛վ,— ասաց նա:

Նրանք հասկացան միմյանց: Կոմս դը Վանդիերը վերստացավ իր ուժերը ու մտքի արթնությունը՝ նավակի մեջ ցատկելու համար: Ստեֆանին հետևեց նրան, Ֆիլիպին մի վերջին ականարկ նետելուց հետո:

— Մայո՛ր, ուզո՞ւմ եք իմ տեղը: Ես արհամարհում եմ կյանքը,— ասաց գրենադերը,— չունեմ ո՛չ կին, ո՛չ երեխա, ո՛չ մայր...

— Քեզ եմ վստահում նրանց,— գոչեց մայորը ցույց տալով կոմսին ու նրա կնոջը:

— Ապահով եղե՛ք այդ մասին: Աչքի լույսի նման կխնամեմ նրանց:

Լաստը մի այնպիսի ուժգնությամբ նետվեց դեպի հակառակ ափը, որ զարնվելով ցամաքին, ցնցումը սասանեց բոլորին: Կոմսը, որը գտնվում էր լաստի եզրին, գլորվեց գետի մեջ: Ընկնելիս մի սառցակույտ կտրեց նրա գլուխը և այն նետեց հեռուն, ինչպես մի գունդ...

— Է՛, ի՞նչ եք ասում, մայր,— կանչեց գրենադերը:

— Մնաք բարո՛վ,— գոչեց կանացի մի ձայն:

Ֆիլիպ դը Սյուսին սարսափից սառած, ընկավ երեսի վրա, ցրտից, ափսոսանքից և հոգնածությունից խորտակված:

— Խեղճ եղբորաղջիկս խելագարվեց,— ավելացրեց բժիշկը մի պահ լռելուց հետո:

— Ա՛հ, պարո՛ն,— շարունակեց նա բռնելով պարոն դ'Ալբոնի ձեռքը,— ինչքա՛ն դժնդակ է եղել կյանքը այնքան դեռատի, այնքան փափկակազմ այդ փոքրիկ կնոջ համար: Մի անլուր դժբախտությամբ բաժանվելով գվարդիայի այդ գրենադերից, որի անունը Ֆլորիո էր, երկու տարի քաշ է գալիս բանակի հետևից... Նա գնում էր, ասացին ինձ, ոտաբորիկ, վատ հագնված և ամիսներով անխնամ ու անսնունդ մնալով: Երբեմն խնամվելով հիվանդանոցներում, երբեմն անասունի նման վտարվելով: Աստված միայն գիտե այն թշվառությունները, որոնց տոկացել ու վերապրել է այդ տարաբախտ կինը: Նա Գերմանիայի մի փոքր քաղաքում արգելափակված էր հոգեկան հիվանդների հետ, մինչդեռ ազգականները նրան մեռած էին կարծում ու իրենց միջև բաժանում նրա ժառանգությունը: 1816 թվականին գրենադեր Ֆլորիոն նրան ճանաչում է Ստրասբուրգի մի պանդոկում, որ եկել էր Ստեֆանին իր բանտից փախչելուց հետո: Գյուղացիները պատմել էին գրենադերին, որ կոմսուհին ամբողջ մի ամիս ապրել է անտառում: Նրանք ոտնատակ էին տվել ամբողջ անտառը նրան գտնելու համար, սակայն չէր հաջողվել: Այդ օրերին ես գտնվում էի Ստրասբուրգից մի քանի մղոն հեռու: Լսելով, որ խոսում են ինչ-որ վայրենի աղջկա մասին, ցանկություն ունեցա ստուգել այդ արտառոց իրողությունները, որոնք առիթ էին տալիս ծիծաղելի պատմությունների: Ի՞նչ տեղի ունեցավ ինձ հետ, երբ ճանաչեցի կոմսուհուն: Ֆլորիոն ինձ պատմեց այն ամենը, ինչ գիտեր այդ ողբալի պատմության վերաբերյալ: Այդ խեղճ թշվառին էլ եղբորս աղջկա հետ մեկտեղ վերցրի հետս և բերեցի Օվեռնը, ուր դժբախտություն ունեցա կորցնելու այդ քաջ մարդուն: Նա որոշ ազդեցություն ուներ կոմսուհի դը Վանդիերի վրա: Նա՛ էր, որ կարողացավ ստիպել նրան հագնվել: Մնաք բարո՛վ, այս բառը, որ նրա միակ խոսքն է, առաջ ասում էր հազվադեպորեն: Ֆլորիոն նրա մեջ զարթեցրել էր մի շարք հուշեր, սակայն ձախողվել էր, հաջողվել էր միայն այդ տխուր խոսքը ավելի հաճախակի կրկնել տալ: Գրենադերը գիտեր նրան զբաղեցնել և մոռացնել տալ նրա վշտերը, խաղալով նրա հետ, և հույս ունեի նրա միջոցով, բայց...

Ստեֆանիի հորեղբայրը մի րոպե լռեց:

— Այստեղ,— վերսկսեց բժիշկը,— նա գտավ մի ուրիշ էակ, որի հետ կարծես լեզու է գտնում: Դա մի ապուշ գեղջկուհի է, որը չնայած իր տգեղության ու տխմարության, սիրել է մի որմնադրի: Այդ որմնադիրն ուզեցել էր ամուսնանալ նրա հետ այն բանի համար, որ նա մի քանի լծվար հող ունի: Խեղճ Ժնևիկը մի տարի եղել է աշխարհի ամենաերջանիկ արարածը: Ամեն կիրակի զարդարվում էր նա և Դալլոյի հետ գնում էր պարելու, նա հասկանում էր սերը: Նրա սրտում և հոգու մեջ տեղ կար գողտրիկ զգացումի համար: Սակայն Դալլոն երկար խորհրդածությունից հետո գտել էր մի ուրիշի, մի երիտասարդ աղջկա, որի խելքը գլխին էր և ուներ երկու լծվար ավելի հող, քան Ժնևիկը: Ուստի Դալլոն լքում է Ժնևիկին: Այդ խեղճ արարածը իսպառ կորցնում է այն մի քիչ խելքը, որ սերը զարգացրել էր նրա մեջ, և հիմա նա կարող է միայն կով պահել ու խոտ հավաքել: Եղբորս աղջիկը և այդ խեղճ աղջիկը ասես միացել են իրենց նույնատեսակ ճակատագրի անտեսանելի շղթայով և այն

զգացումով, որ նրանց խելագարության պատճառն է: Ահա՛, տեսե՛ք,— ասաց Ստեֆանիի հորեղբայրը, մարկիզ դ'Ալբոնին առաջնորդելով դեպի պատուհանը:

Արդարև, դատավորը տեսավ գեղանի կոմսուհուն նստած գետնի վրա, Ժնևիկի ծնկների միջև: Գեղջկուհին զինված ոսկրե մի խոշոր սանրով, իր ամբողջ ուշադրությունը նվիրել էր Ստեֆանիի սև, երկար ու խճճված մազերը բանալու, իսկ սա թույլ էր տալիս, որ սանրեն իր մազերը, արձակելով խեղդուկ ճիչեր, որոնց շեշտը մատնում էր բնագոգրեն զգացված մի հաճույք:

Պարոն դ'Ալբոնը սարսռաց այդ մարմնական լքումը և անասնական հեղգությունը տեսնելով, որը մատնում էր կոմսուհու մոտ գիտակցության կատարյալ բացակայությունը:

— Ֆիլիպ, Ֆիլիպ,— բացականչեց դ'Ալբոնը,— անցած դժբախտությունները ոչինչ են: Բնավ հույս չկա՞ ուրեմն,— հարցրեց նա:

Ծեր բժիշկը աչքերը դեպի երկինք բարձրացրեց:

— Մնաք բարով, պարոն, ասաց պարոն դ'Ալբոնը ծերունու ձեռքը սեղմելով: Բարեկամս ինձ է սպասում: Շուտով դուք կտեսնեք նրան:

— Ուրեմն իսկապես նա՞ է,— բացականչեց դը Սյուսին, Մարկիզ դ'Ալբոնի առաջին բառերը լսելուց հետո:— Ա՛հ, ես դեռևս կասկածում էի,— ավելացրեց նա, թողնելով, որ արտասուքները թափվեն իր սև աչքերից, որոնց արտահայտությունը սովորաբար խիստ էր:

— Այո՛, նա կոմսուհի դը Վանդիերն է,— պատասխանեց դատավորը:

Գնդապետը հանկարծ վեր կացավ և շտապեց հագնվել:

— Դե՛, լա՛վ, Ֆիլիպ,— ասաց դատավորը ապշած,— խենթացա՞ր ինչ է:

— Սակայն ես այլևս հիվանդ չեմ,— պատասխանեց գնդապետը պարզությամբ:— Այդ լուրը մեղմեց իմ ցավերը: Ի՛նչ հիվանդություն կարող է զգալի լինել ինձ համար, երբ ես մտածում եմ Ստեֆանիի մասին: Ես գնում եմ Բոնգոմ, նրան տեսնելու, նրա հետ խոսելու, նրան բժշկելու համար: Նա ազատ է, է՛հ, լա՛վ, երջանկությունը պիտի ժպտա մեզ, այլապես նախախնամություն գոյություն չունի: Կարծո՞ւմ ես ուրեմն, որ այդ խեղճ կինը կարող է ինձ լսել և բանականությունը նորից չվերստանալ:

— Նա արդեն տեսավ քեզ և չճանաչեց,— մեղմությամբ առարկեց դատավորը, որը տեսնելով իր բարեկամի չափազանցյալ հույսը, ջանում էր նրան փրկարար կասկածներ ներշնչել:

Գնդապետը ցնցվեց, բայց սկսեց ժպտալ՝ թերահավատության թեթև մի շարժում անելով: Ոչ ոք չհամարձակվեց ընդդիմանալ գնդապետի ծրագրին:

Մի քանի ժամ անց նա հաստատվեց հին վանատան մեջ, բժշկի և կոմսուհի դը Վանդիերի մոտ:

— Որտե՞ղ է նա,— գոչեց Ֆիլիպը, հենց որ հասավ:

— Լռություն,— պատասխանեց նրան պարոն Ֆանժան, Ստեֆանիի հորեղբայրը:— Նա քնած է, ահա, տեսե՛ք:

Ֆիլիպը տեսավ խեղճ խենթ կնոջը, արևի տակ մի նստարանի վրա պալկած: Գլուխը օդի տաքությունից պաշտպանված էր՝ դեմքի վրա ցրիվ եկած մազերով. թևերը՝ առանձին շնորհով կախված էին մինչև գետին. մարմինը վայելչորեն տարածված էր, եղնիկի մարմնի նման. ոտները

ծավլած էին տակը. կուրծքը համաչափ բարձրանում էր ու իջնում, մորթը, գույնը ճենապակու սպիտակություն ունեին, որը երեխաների թափանցիկ ու պայծառ դեմքի վրա այնքան հիացնում է մեզ: Նրա կողքին, Ժնևիկը բռնել էր ձեռքում մի ճյուղ, որն անշուշտ Ստեֆանին կտրել էր կաղամախու ամենաբարձր կատարից: Ապուշ կինը մեղմորեն շարժում էր այդ տերևալից ճյուղը իր քնած ընկերուհու վրա, և՛ ճանճերին հալածելու, և՛ թե նրան հովացնելու համար: Գեղջկուհին նայեց պարոն Ֆանժային և գնդապետին, ապա անասունի նման, որը ճանաչել է իր տիրոջը, դեմքը դարձրեց դեպի կոմսուհին և շարունակեց հսկել նրա վրա, առանց ցույց տալու մինչև անգամ ամենաանշան զարմանք կամ իմացականություն: Օդը կիզիչ էր: Քարե նստարանը կարծես կայծկլտում էր, և մարգագետինը դեպի երկինք էր նետում գոլորշիներ, որոնք ծփում էին և փողփողում խոտերի վրա ոսկե փոշու նման: Սակայն Ժնևիկը կարծես չէր զգում այրող այդ տապը: Գնդապետն ամուր սեղմեց բժշկի ձեռքերը իր ձեռքերի մեջ: Զինվորականի աչքերից հոսող արցունքները գլորվեցին իր առնական այտերի վրայով և ընկան մարզի վրա, Ստեֆանիի ոտների տակ:

— Պարո՛ն,— ասաց հորեղբայրը,— ահա երկու տարի է ինչ-որ իմ սիրտը ամեն օր կտոր-կտոր է լինում: Շուտով դուք ևս կլինեք ինձ նման: Լաց եղե՛ք, բարեկա՛մ, եթե լաց չլինեք, ձեր վիշտը չի ամոքվի:

— Դուք խնամել եք նրան,— ասաց գնդապետը, որի աչքերն արտահայտում էին և երախտագիտություն և թե նախանձ:

Այս երկու մարդիկ հասկացան միմյանց և նորից ամուր սեղմվելով միմյանց ձեռքը՝ մնացին անշարժ, գմայլելով հիասքանչ անդորրության վրա, որ քունը տարածում էր այդ հրապուրիչ էակի վրա: Երբեմն-երբեմն Ստեֆանին հառաչանք էր արձակում, և այդ հառաչանքը, որ զգացողության հավանականություն էր մատնում, դժբախտ գնդապետին բերկրանքի սարսուռ էր պատճառում:

— Ավադ,— մեղմորեն ասաց նրան պարոն Ֆանժան,— խաբկանքներ մի՛ ունենաք, պարո՛ն, դուք այս րոպեին նրան տեսնում եք իր ողջ բանականության մեջ:

Նրանք, ովքեր բերկրանքով ժամեր շարունակ դիտել են իրենց սիրած էակի քունը, որի աչքերը զարթնելիս պիտի ժպտային իրենց, անշուշտ պիտի ըմբռնեն այն հաճելի և միաժամանակ սոսկալի զգացումը, որ հուզում էր գնդապետի համակ էությունը: Նրա համար այդ նինջը պատրանք էր միայն, խաբկանք. զարթոնքը կլիներ մի պահ և մահերի ամենասոսկալին: Հանկարծ մի փոքր այծ վազեց, երեք ուսյունով նետվեց դեպի նստարանը, հոտոտեց Ստեֆանիին, որին այդ աղմուկը զարթնեցրեց: Նա թեթևորեն ոտքի ելավ: Սակայն այդ շարժումը ամեննին չահաբեկեց այդ կամակոր կենդանուն: Բայց երբ կոմսուհին նշմարեց Ֆիլիպին, փախավ մինչև թանթրվենիների ցանկապատը, նրա հետևից էլ չորքոտանի ընկերը: Հետո նա արձակեց վախեցած փոքրիկ թռչունի այն ճիչը, որն արդեն գնդապետը լսել էր վանդակորմի մոտ, որտեղ կոմսուհին առաջին անգամ երևացել էր մարկիզ դ'Ալբոնին: Վերջապես նա մազլցեց կաղամախի ծուռ ծառի վրա և թաքնվեց այդ ծառի կանաչ սաղարթների մեջ ու սկսեց նայել օտարականին՝ անտառի ամենահետաքրքիր սոխակի ուշադրությամբ:

— Մնաք բարո՛վ, մնաք բարո՛վ, մնաք բարո՛վ,— ասաց նա, սակայն նրա հոգին այդ բառին որևէ զգայուն շեշտ չհաղորդեց:

Դա իր եղանակը սուլող թռչունի անզգայությունն էր:

— Նա ինձ չի ճանաչում,— բացականչեց գնդապետը, սաստիկ հուսահատված ու վշտաբեկ...— Ստեֆանի՛, ես Ֆիլիպն եմ, Ֆիլի՛պը:

Եվ խեղճ զինվորականն առաջացավ դեպի կաղամախի ծառը, սակայն, երբ ծառին հասնելու երեք քայլ էր մնացել, կոմսուհին նայեց նրան, ասես մարտահրավեր կարդալով, թեև մի տեսակ վախի արտահայտություն անցավ նրա աչքում, հետո, մեկ ուստյունով նա կաղամախուց ցատկեց մի ակացիայի վրա, և այնտեղից հյուսիսի եղևնու վրա ճյուղից ճյուղ անցավ անհավատալի թեթևությամբ:

— Մի՛ հետապնդեք նրան,— ասաց պարոն Ֆանժան գնդապետին:— Դուք ձեր և նրա միջև կստեղծեք խորշանք, որն անհաղթահարելի կարող է դառնալ: Ես ձեզ կօգնեմ, որպեսզի նա ճանաչի ձեզ և ընտելանա: Եկե՛ք նստեք այս նստարանի վրա: Եթե ուշադրություն չդարձնեք այդ խեղճ խենթի վրա, շուտով կտեսնեք, որ անզգալիորեն կմոտենա ձեզ գննելու համար:

— Նա ինձ չճանաչի՛ և փախչի՛ ինձնից,— կրկնեց գնդապետը նստելով և մեջքը հենելով մի ծառի, որի սաղարթները հովանավորում էին գեղջկական մի նստարան:

Եվ նրա գլուխը հակվեց կրծքի վրա: Բժիշկը լուռ մնաց այդ խոր վշտի հանդեպ: Կոմսուհին շուտով իջավ իր եղևնու բարձրությունից՝ շրջմուլիկ հրի նման թռչկոտելով, երբեմն հետևելով այն ծփանքներին, որ քամին դրոշմում էր ծառերին: Նա կանգ էր առնում յուրաքանչյուր ճյուղի վրա՝ օտարականին զննելու համար: Սակայն նրան տեսնելով նստած, վերջապես ցատկեց խոտի վրա և մարգագետնի միջով դանդաղ քայլերով եկավ մոտեցավ գնդապետին: Երբ նա հենվեց նստարանից տասը քայլ հեռու գտնվող մի ծառի, պարոն Ֆանժան կամացուկ ասաց գնդապետին.

— Իմ գրպանից զգուշությամբ մի քանի կտոր շաքար վերցրե՛ք և ցույց տվե՛ք, նա կմոտենա: Ի նպաստ ձեզ, հոժարակամ կհրաժարվեմ նրան համով բաներ տալու հաճույքից: Նա շաքար շատ է սիրում և դրանով դուք նրան կվարժեցնեք ձեզ մոտենալու և ճանաչելու:

— Երբ նրա գիտակցությունը տեղն էր,— պատասխանեց Ֆիլիպը տխրությամբ,— նա երբեք չէր ախորժում շաքարեղենից:

Երբ գնդապետը դեպի Ստեֆանին շարժեց իր աջ ձեռքի ցուցամատի և բթամատի միջև բռնած շաքարի կտորը, նա նորից արձակեց իր վայրենի ճիչը և թափով նետվեց Ֆիլիպի վրա: Ապա բնագդական վախից դրդված, որ ներշնչում էր Ֆիլիպը, կանգ առավ: Նա նայում էր շաքարին և փոխիփոխ շրջում էր գլուխը, ինչպես այն դժբախտ շները, որոնց տերն արգելում է դիպչել ուտելիքին, քանի դեռ դանդաղորեն չի արտասանված մարգական խոսքերը: Վերջապես անասնական կիրքը հաղթեց վախին, Ստեֆանին երկչոտությամբ երկարեց իր սիրուն թուխ ձեռքը որսը հափշտակելու համար... ձեռք գցեց շաքարը և անհետացավ անտառի թփուտների մեջ: Այս սոսկալի տեսարանը իսպառ ընկճեց գնդապետի հոգին և նա արտասվալից մտավ հյուրասրահը:

— Ուրեմն սերը նվա՞ղ արիություն ունի, քան բարեկամությունը,— ասաց նրան պարոն Ֆանժան:— Ես հույս ունեմ, պարոն բարոն: Եղբորս խեղճ աղջիկը է՛լ ավելի խղճալի վիճակի մեջ էր գտնվում, քան այժմ, որ տեսնում եք:

— Հնարավո՞ր է միթե,— գոչեց Ֆիլիպը, սաստիկ հուզված...

— Նա մերկ էր մնում,— հարեց բժիշկը:

Գնդապետը սոսկումի մի շարժում կատարեց ու գունատվեց: Բժիշկը այդ գունատման մեջ ճանաչեց վշտառիթ մի ախտանիշ, եկավ, քննեց նրա բազկերակը և գտավ, որ նա ուժգին տենդի մեջ է: Շատ թախանձանքից հետո բժշկին հաջողվեց համոզել գնդապետին, որ պառկի: Բժիշկը պատրաստեց աֆիոնի թեթև մի դոզա՝ նրան խաղաղ քուն ապահովելու համար:

Մոտ մի շաբաթ անցավ, որի ընթացքում բարոն դը Սյուսին հաճախ մահացու տագնապների դեմ մաքառեց, այնպես որ նրա աչքերի արցունքն այլևս ցամաքեց: Հաճախ խորտակված նրա սիրտն ու հոգին չկարողացան վարժվել այն տեսարանին, որ իրեն ներկայացնում էր կոմսուհու խելագարությունը: Սակայն հարմարվեց, այսպես ասած, այդ անագորույն դրության հետ և իր վշտի մեջ սփռված գտավ: Նրա հերոսությունը սահման չունեի: Նա արիություն ունեցավ Ստեֆանին ընտելացնել նրա համար համադամ բաներ ընտրելով և այնքան հոգածություն ցուցահանեց այդ սնունդը նրան հայթայթելու համար: Նա աստիճանաբար ձեռք բերեց համեստ նվաճումներ՝ նրա բնագոյի, նրա իմացականության այդ վերջին բեկորի վրա, որ նրան ավելի ընտելացած դարձրեց, քան երբևէ եղել էր նա: Գնդապետը ամեն առավոտ իջնում էր պարտեզ, և եթե երկար ժամանակ կոմսուհուն փնտրելուց հետո չէր կարողանում կռահել, թե ո՞ր ծառի վրա է նվաղկոտորեն օրորվում նա, ո՞չ էլ այն անկյունը, որտեղ նա թաքնվել էր մի թռչունի հետ խաղալու, ո՞չ էլ այն տանիքը, որի վրա թառել էր, սուլում էր այնքան հոչակավոր «Սիրիա մեկնելիս» եղանակը... Ստեֆանին անմիջապես մոտ էր վազում եղնիկի թեթևությամբ: Նա այնքան լավ էր վարժվել գնդապետին հանդիպելու, որ այլևս նրանից չէր վախենում: Շուտով նա վարժվեց նստել նրա ծնկին, իր վտիտ ու ճկուն բազուկներով փաթաթվել նրան: Այդ դիրքում Ֆիլիպը դանդաղորեն շաքարեղեն էր տալիս փափկակեր կոմսուհուն: Ուտելուց հետո, հաճախ պատահում էր, որ Ստեֆանին խուզարկում էր իր բարեկամի գրպանները այնպիսի շարժումներով, որ կապիկի շարժումների մեքենական արագությունն ունեին: Երբ նա վստահ էր լինում, որ այլևս ոչինչ չկար այնտեղ, նայում էր Ֆիլիպին պայծառ, ջինջ, անմիտ հայացքով, խաղում՝ նրա հետ, փորձում հանել նրա երկար կոշիկները՝ ոտքը տեսնելու համար, պատռում էր նրա ձեռնոցները, դնում նրա գլխարկը, բայց և թողնում էր, որ գնդապետը հավի նրա մագերիին, գրկի նրան: Վերջապես լռությամբ նայում էր նրան, երբ նա արտասվում էր: Լավ էր հասկանում «Սիրիա մեկնելիս» երգի շվացումը, բայց Ֆիլիպին չհաջողվեց, որ խելագարին արտասանել տա **Ստեֆանի**՝ իր անունը: Իր սոսկալի ձեռնարկումի մեջ գնդապետին նեցուկ էր հանդիսանում նրան փրկելու հույսը, որը երբեք չէր լքում Ֆիլիպին: Երբ աշնան գեղեցիկ առավոտներին տեսնում էր կոմսուհուն հանդարտորեն նստած մի նստարանի վրա, դեղնած մի կաղամախենու տակ, խեղճ սիրահարը պառկում էր նրա ոտքերի մոտ և նայում էր ուղիղ նրա աչքերի մեջ, այնքան երկար, որքան նա թողնում էր նայել իրեն, հուսալով, որ այնտեղից բխող լույսը իմացական կդառնա: Երբեմն նա ընկնում էր պատրանքի մեջ, և կարծում էր, որ կնոջ աչքերի անշարժ ու խիստ շողերը նորից թրթռուն են դառնում, կակղում են և աշխուժանում, և նա գոչում էր.

— Ստեֆանի՛, Ստեֆանի՛, լսո՞ւմ ես ինձ, տեսնո՞ւմ ես ինձ:

Սակայն խենթը լսում էր այդ ձայնը, ասես քամու աղմուկը լինեի սաղարթների մեջ:

Գնդապետը հուսահատությունից գալարում էր ձեռքերը, մի հուսահատություն, որ միշտ նոր էր, միշտ նոր: Ժամանակը և այս գուր փորձերը միայն իր վշտերն էին ավելացնում: Մի երեկո, խաղաղ երկնքի տակ, դաշտային այս ապաստարանի լռության ու խաղաղության մեջ, պարոն Ֆանժան հեռվից տեսավ բարոնին, որ զբաղված էր ատրճանակ լցնելով:

Ծերունի բժիշկը հասկացավ, որ Ֆիլիպը այլևս կորցրել է հույսը. նա զգաց, որ արյունը սառում է իր երակներում, և նա ընդդիմադրեց իրեն տիրող խելացնորությանը, որովհետև նա գերադասում էր, որ իր եղբոր աղջիկը լինի կենդանի և խելագար, քան մեռած: Նա մոտ վազեց:

— Ի՞նչ եք անում,— ասաց նա:

— Սա ինձ համար է,— պատասխանեց գնդապետը ցույց տալով նստարանի վրա լցված մի ատրճանակ, իսկ ահա սա նրա համար է,— ավելացրեց նա ավարտելով ձեռքում բռնած ատրճանակը լցնելը:

Կոմսուհին փովել էր գետնի վրա և խաղում էր ատրճանակի գնդակների հետ:

— Ուրեմն դուք չգիտեք,— հարեց բժիշկը սառնությամբ, ջանալով ծածկել իր զարհուրանքը,— որ այս գիշեր քնելիս նա ասաց «Ֆիլիպ»:

— Նա իմ անո՞ւնը տվեց,— բացականչեց բարոնը ձեռքից բաց թողնելով ատրճանակը, որը Ստեֆանին վերցրեց, բայց Ֆիլիպը այն խլեց նրա ձեռքից, վերցրեց նաև նստարանի վրա ընկածը և հեռացավ:

— Խե՛ղճ փոքրիկս,— գոչեց բժիշկը, երջանիկ, որ իր խաբեությունը հաջողություն ունեցավ:

Նա կրծքին սեղմեց իր խելագար ազգականուհուն և շարունակեց.

— Քեզ պիտի սպաներ այդ եսասեր մարդը: Նա ուզում էր սպանել քեզ, որովհետև տառապում է: Նա չգիտեր քեզ սիրել հանուն քեզ, աղջի՛կս: Մենք կներենք նրան, այնպես չէ՞: Նա խելացնոր է, իսկ դու միայն խենթ ես: Իմացի՛ր միայն, աստված պետք է քեզ կանչի իր մոտ: Մենք քեզ դժբախտ ենք կարծում, որովհետև դու մասնակից չես այլևս մեր թշվառություններին: Ի՛նչ հիմարն ենք մենք. բայց,— ասաց նա, նստեցնելով նրան իր ծնկներին,— դու երջանիկ ես, ոչինչ քեզ չի նեղացնում, ապրում ես թռչունի նման, այծյամի պես...

Կոմսուհին հարձակվեց մի սարյակի վրա, որ ոստոստում էր, բռնեց նրան, ուրախության մի ճիչ արձակելով, խեղդեց, դիտեց նրա մահը և նետեց մի ծառի տակ՝ առանց այլևս մտածելու նրա մասին:

Հաջորդ օրը հազիվ թե լույսը բացված էր, գնդապետը իջավ պարտեզ, փնտրեց Ստեֆանիին, նա հավատում էր բախտավորությանը: Չգտնելով կոմսուհուն, սուլեց: Երբ եկավ իր սրտի տիրուհին, բռնեց նրա թևից, և առաջին անգամ միասին քայլելով գնացին խամրած ծառերի ոլորանի տակ, որոնց տերևները թափվում էին վաղորդյան թեթև քամուց: Գնդապետը նստեց և Ստեֆանին ինքը տեղավորվեց նրա ծնկներին: Ֆիլիպը դողաց բերկրանքից:

— Իմ սեր,— ասաց նա, հրայրքով համբուրելով կոմսուհու ձեռքերը,— ես Ֆիլիպն եմ...

Կոմսուհին հետաքրքրությամբ նայեց գնդապետին:

— Ե՛կ, — ավելացրեց Ֆիլիպը, թախանձելով նրան:— Ձգո՞ւմ ես սրտիս տրոփյունը: Ես միշտ սիրում եմ քեզ: Ֆիլիպը չի մեռել, նա այստեղ է, դու նրա ծնկների վրա ես: Դու իմ Ստեֆանին ես, և ես՝ քո Ֆիլիպը:

— Մնաք բարո՛վ,— ասաց կինը,— մնաք բարո՛վ:

Գնդապետը սարսռաց, որովհետև նկատեց, որ իր գերզորությունը փոխանցվում է իր սիրուհուն: Հույսից բորբոքված նրա ծվատող ճիչը, հավերժական սիրո, զառանցագին կրքի այդ վերջին պտոթկումը վերարթնացնում էր իր բարեկամուհու բանականությունը:

— Ա՛հ, Ստեֆանի, մենք երջանիկ կլինենք:

Կոմսուհին արձակեց գոհունակության մի ճիչ և նրա աչքերը արտահայտեցին իմացականության տարտամ մի շող:

— Նա ճանաչո՛ւմ է ինձ... Ստեֆանի՛ ...

Գնդապետը զգաց, որ իր կուրծքն ուռչում է և կռպերը թրջվում: Սակայն նա հանկարծ տեսավ, որ կոմսուհին ցույց է տալիս մի կտոր շաքար, որ նա գտել էր Ֆիլիպի գրպանը խուզարկելիս, երբ վերջինս խոսում էր:

Գնդապետն ուրեմն բանականության այդ շողը մարդկային մտքի տեղ էր ընդունել, մինչդեռ կապկային մի չարաճճիություն էր: Ֆիլիպը կորցրեց իր գիտակցությունը... Պարոն Ֆանժան կոմսուհուն գտավ գնդապետի մարմնի վրա նստած: Նա կրծում էր իր շաքարը՝ զգացած հաճույքը հայտնելով դեմքի ծամածռություններով, որոնք կարող էին հիացմունք պատճառել, եթե երբեք նա ունենար իր բանականությունը: Նա ցանկացել էր կատակով նմանվել իր թութակին կամ կատվին:

— Ա՛հ, բարեկա՛մս,— գոչեց Ֆիլիպը, երբ գիտակցության եկավ:— Ես ամեն օր, ամեն րոպե մեռնում եմ: Ես չափազա՛նց եմ սիրում: Կհանդուրժեի ամեն ինչի, եթե իր խելագարության մեջ նա պահած լիներ կանացի մի նկարագիր: Սակայն նրան միշտ վայրենի տեսնել, տեսնել նրան...

— Ուրեմն ձեզ պետք է օպերային մի խենթ... գնացե՛ք պարոն, լքեցե՛ք նրան: Թողե՛ք այս տխուր մենաստանը: Ես գիտեմ ապրել այս փոքրիկ և սիրելի էակի հետ: Ես հասկանում եմ նրա խենթությունը, հետևում նրա շարժումներին, ու մտնում նրա գաղտնիքների մեջ: Մի օր դուք ինձ շնորհակալություն կհայտնեք:

Գնդապետը հեռացավ Բոնգոմից և այնտեղ վերադարձավ միայն մի անգամ: Բժիշկը գնդապետի մասին տեղեկություններ հավաքեց և իմացավ, որ այդ դժբախտը քաշվել է Սեն Ժերմենի մոտ ունեցած իր կալվածքը:

Բարոնը հավատալով մի երազի՝ հղացել էր մի ծրագիր՝ կոմսուհու բանականությունը վերականգնելու համար: Բժշկից գաղտնի, նա աշնան մնացած օրերը գործադրում էր այդ հսկայական ձեռնարկման պատրաստությունների վրա: Իր պուրակի միջով մի փոքր գետ էր հոսում, որտեղ այդ գետը ձմռանը ողողում էր մի ճահիճ, որը քիչ թե շատ նման էր այն ճահիճին, որը տարածվում էր Բերեզինայի աջ ափի երկայնքով: Մի բլրի վրա գտնվող Մատու գյուղը ամբողջացնում էր այդ սարսափելի տեսարանը, ինչպես Ստուդիանկան՝ Բերեզինայի հովիտը:

Գնդապետը բանվորներ հավաքեց մի ջրանցք փորելու համար, որը պետք է ներկայացներ լափող գետը, որտեղ կորել էին Ֆրանսիայի գանձերը՝ Նապոլեոնն ու իր բանակը: Հենվելով իր հիշողության վրա, Ֆիլիպը հաջողեց ընդօրինակել իր պարկում այն ափը, ուր գնե՞րալ էրլեն կառուցել էր տվել իր կամուրջները: Նա տնկել տվեց կամրջակալներ և այրեց, որպեսզի կարողանար պատկերացնել սևացած և կիսախանձ ատաղձը, որը հայտնում էր ետ մնացող զինվորներին, թե Ֆրանսիայի ճանապարհը իրենց համար փակված էր: Գնդապետը բերել տվեց այնպիսի բեկորներ, որոնք նման էին այն բեկորներին, որ օգտագործել էին իր դժբախտության ընկերները՝ իրենց լաստը կառուցելու համար: Նա ավերեց իր պուրակը, որպեսզի պատրանքը

կատարյալ լինի, որի վրա հիմնում էր իր վերջին հույսը: Հրամայեց բերել պատառոտված զգեստներ՝ բազմահարյուր գյուղացիներին հագցնելու համար: Բարձրացրեց հյուղակիներ, բացօթյա ռազմաճամբարներ, մարտկոցներ, որ հրդեհեց: Վերջապես ոչինչ չմոռացավ այն բոլորից, որը կարող էր վերադարձնել այդ բոլոր տեսարաններից ամենասուսկալին և նա հասավ իր նպատակին:

Դեկտեմբերի առաջին օրերին, երբ ձյունը իր սպիտակ և հաստ վերարկուով ծածկեց գետինը, կարծես նա տեսնում էր Բերեզինան: Այդ սարքովի Ռուսաստանը այնքան զարհուրելի մի իրականություն էր, որ գնդապետի զենքի բազմաթիվ ընկերները ճանաչեցին իրենց հին թշվառությունների տեսարանները: Պարոն դը Սյուսին պահեց այդ ողբերգական ներկայացման գաղտնիքը, որի մասին այդ ժամանակ փարիզյան հասարակության բազմաթիվ շրջանակներ խոսում էին որպես խելացնոր մի ձեռնարկության մասին:

1820 թվականի հունվար ամսվա սկզբներին, գնդապետը նստեց մի կառք, որը նման էր տեր և տիկին դը Վանդիերներին Մոսկվայից Ստուդիանկա բերող կառքին և ուղղվեց դեպի Իլ-Ադամի անտառը: Կառքին լծված ձիերը մոտավորապես նման էին այն ձիերին, որոնց նա իր կյանքի կորստյան գնով բերել էր ռուսների շարքերի միջից: Հագել էր արտառոց և ցեխաթաթախ զգեստ, կրում էր զենքեր և գլխին դրել էր 1812 թվականի նոյեմբերի 29-ի դրած գլխարկը: Մինչև իսկ թողել էր, որ մոռուքն ու մազերը երկարեն, դեմքը անխնամ էր պահել, որպեսզի ոչինչ չպակասի այդ զարհուրելի իրականությունից:

— Ես գուշակեցի ձեր մտադրությունը,— գոչեց պարոն Ֆանժան, երբ գնդապետը կառքից իջնում էր:— Եթե դուք ցանկանում եք, որ հաջողվի ձեր ծրագիրը, այս հագուստով ձեզ ցույց մի տվեք կոմսուհուն: Այս երեկո եղբորս աղջկան մի քիչ աֆիոն ընդունել կտամ: Քնի ընթացքում կհագցնենք նրան այնպես, ինչպես նա հագել էր Ստուդիանկայում, կտեղավորենք նրան այս կառքի մեջ: Իսկ ես ձեզ կհետևեմ քառանիվ մի կառքով:

Գիշերվա ժամը 2-ին երիտասարդ կոմսուհուն տարան կառքի մեջ, տեղավորեցին բարձիկների վրա և ծածկեցին կոշտ ծածկոցներով: Մի քանի գյուղացիներ լուսավորում էին այս եզակի առևանգումը: Հանկարծ գիշերվա լույսից մեջ արձագանքեց մի սուր ճիչ: Ֆիլիպը և բժիշկը դարձան և տեսան ժնիկին, որ կիսամերկ դուրս էր ելնում գետնահարկի իր սենյակից, որտեղ պառկում էր նա:

— Մնաք բարո՛ւ, մնաք բարո՛ւ, վերջացավ, մնաք բարո՛ւ,— գոռում էր նա, ջերմ արցունք թափելով:

— Դե, ի՞նչ է պատահել քեզ,— նրան ասաց պարոն Ֆանժան: Ժնիկը հուսահատ շարժումով օրորեց գլուխը, բազուկները դեպի երկինք բարձրացրեց, նայեց կառքին, երկար մի մրմունջ արձակեց, խորունկ սարսափի ակներև նշաններ արեց և տուն մտավ լռությամբ:

— Սա բարեգուշակ երևույթ է,— գոչեց գնդապետը:— Այդ աղջիկը ավստոսում է, որ էլ ընկերուհի չի ունենալու: Նա տեսնում է գուցե, որ Ստեֆանին վերստանալու է իր բանականությունը:

— Աստված եթե կամենա,— պատասխանեց պարոն Ֆանժան, որը կարծես, շատ խիստ ազդվեց այդ միջադեպից:

Հոգեկան հիվանդներին բուժելու իր պրակտիկայում, բժիշկը հանդիպել էր պայծառատեսության բազմաթիվ օրինակների, որոնց մի քանի ապացույցները տվել էին իրենք խելագարները, և որ գտնվում են, ըստ շատ ճանապարհորդների վկայության, վայրենի ցեղերի մոտ:

Այնպես, ինչպես գնդապետը նախատեսել էր, Ստեֆանին Բերեզինայի այդ շինծու դաշտով անցավ մոտավորապես առավոտյան ժամը իննին: Նա զարթնեց մի ահռելի պայթյունից, որը տեղի ունեցավ

տեսարանի վայրից մի հարյուր քայլ հեռվում: Սա պայմանական մի նշան էր: Եվ ահա հազար գյուղացիներ բարձրացրին մի ահռելի աղմուկ, նման այն հուսահատական ուռույթին, որ ահաբեկել էր ռուսներին, երբ քսան հազար ետ մնացողները իրենց իսկ մեղքով մահվան կամ գերության մատնվեցին: Այդ աղաղակի, թնդանոթի այդ հարվածի վրա կոմսուհին կառքից դուրս թռավ, խելացնոր անձկությամբ վազեց ձյունոտ տեղանքի վրայով, տեսավ այրված բացօթյա ռազմաճամբարները, չարաղետ լաստը, որ գցում էին սառած Բերեզինայի մեջ: Այնտեղ էր մայրը Ֆիլիպը՝ ճոճելով սուրը բազմության վրա: Տիկին դը Վանդիերը այնպիսի սրտակեղեք մի ճիչ արձակեց, որ սառեցրեց բոլոր սրտերը, և կանգնեց գնդապետի առաջ, որը դողում էր հուզումից: Կոմսուհին ինքնամփոփվեց, նախ տարտամորեն նայեց իր շրջապատի այդ տարօրինակ տեսարանին: Մի պահ, այնքան արագ, որքան կայծակը, նրա աչքերը ունեցան իմացականությունից զուրկ հստակատեսություն, որի վրա մենք հիանում ենք թռչունների փայլուն աչքի մեջ: Հետո ձեռքը տարավ ճակատին, խոհական ինչ-որ արտահայտություն ստացավ: Նա դիտեց այդ կենդանի հիշողությունը, այդ անցյալ կյանքը, որը պարզվում էր իր առաջ, թափով գլուխը դարձրեց դեպի Ֆիլիպը և տեսավ նրան: Ահավոր, ճնշող և սրտմաշուք մի լռություն իշխում էր ամբոխի մեջ: Գնդապետը հենում էր ու չէր համարձակվում խոսել, բժիշկը լաց էր լինում: Ստեֆանիի գեղեցիկ դեմքը թեթևակի գունավորվեց, ապա երանգ առ երանգ, վերստին գտավ իր փայլը և երիտասարդ աղջկա իր շողշողուն թարմությունը: Նրա դեմքը դարձավ գեղեցիկ ծիրանագույն: Կյանքը և երջանկությունը, բոցավառ իմացականությամբ կենդանացած՝ հետզհետե նվաճում էին նրան հրդեհի նման: Ջղաձգական մի սարսուռ հաղորդվեց ոտքերից մինչև սիրտը: Հետո այս հուզվածության երևույթները մի անգամից ունեցան ընդհանուր կապ, երբ Ստեֆանիի աչքերն արձակեցին երկնային մի ճառագայթ, կենդանացած մի բոց: Ապրում էր նա, նա մտածում էր: Նա սարսռաց, սարսափի՞ց գուցե: Աստված ինքն իսկ երկրորդ անգամ բացում էր այդ մեռած լեզուն և նորից իր հուրը նետում այդ մարած հոգու մեջ: Մարդկային կամքը եկավ իր էլեկտրական հորձանքով և կենդանացրեց այդ մարմինը, որտեղից այնքան երկար ժամանակ բացակայել էր:

— Ստեֆանի, — գոչեց գնդապետը ուրախությունից խելահեղ:

— Օ՛հ, Ֆիլիպն է,— ասաց խեղճ կոմսուհին:

Նա նետվեց գնդապետի դողդոջուն թևերի մեջ, որ պարզել էր նրան ընդունելու համար, և երկու սիրահարների գրկախառնությունը ահակալեց դիտողներին: Ստեֆանին հեղեղանման արցունք էր թափում: Բայց հանկարծ, նրա արտասուքները չորացան, նա դիակնացավ, կարծես թե շանթահար եղավ և ասաց թույլ ձայնով:

— Մնաք բարո՛ւ Ֆիլիպ... սիրում եմ քեզ... մնաք բարո՛ւ:

— Օ՛հ, մեռավ նա,— գոչեց գնդապետը, բացելով իր բազուկները:

Ծեր բժիշկն ընդունեց իր եղբոր աղջկա անկենդան մարմինը, երիտասարդական ուժով գրկեց նրան, տարավ և նրա հետ մեկտեղ նստեց փայտի մի կույտի վրա: Նա նայեց կոմսուհուն և տկար ու ջղաձգվող ձեռքը դրեց նրա սրտի վրա: Միտն այլևս չէր բաբախում:

— Ճիշտ է, ուրեմն,— ասաց նա, փոխիփոխ նայելով անշարժ ու անխոս գնդապետին և Ստեֆանիի դեմքին, որի վրա մահը տարածում էր այն շողշողուն գեղեցկությունը, խուսափուկ լուսապսակը, գրավականը գուցե մի փայլուն ապագայի...— Այո՛, մեռած է նա:

— Ա՛հ, այդ ժպիտը,— գոչեց Ֆիլիպը,— տեսե՛ք ժպիտը: Միթե այդ կարելի՞ է:

— Նա արդեն սառել է...— պատասխանեց պարոն Ֆանժան:

Պարոն դը Սյուսին մի քայլ արեց այդ տեսարանից պոկվելու համար, սակայն կանգ առավ, սուլեց այն եղանակը, որին սովոր էր խենթ կինը, և իր սիրտուհու վազելը չտեսնելով, հեռացավ անհաստատ ու երերուն քայլերով, ինչպես հարբած մարդը, շարունակ սուլելով, բայց էլ ետ չդառնալով...

Գեներալ Ֆիլիպ դը Սյուսին աշխարհիկ հասարակության մեջ համարվում էր որպես առանձնապես հաճելի և մանավանդ շատ զվարթ մարդ։ Մի քանի օր առաջ մի տիկին նրան կոմպլիմենտներ էր անում նրա լավ տրամադրության և խառնվածքի հավասարակշռության համար։

— Ա՛հ, տիկին՛ն, ասաց գեներալը նրան,— իմ կատակների համար ես շատ թանկ եմ վճարում երեկոյան, երբ ես մենակ եմ մնում։

— Ուրեմն դուք միշտ մենակ չե՞ք լինում։

— Ո՛չ,— պատասխանեց նա ժպտալով։

Մարդկային բնությունը զննող խոհական մեկը, եթե այդ պահին կարողանար դիտել դը Սյուսիի դեմքի արտահայտությունը, անկասկած կսարսափեր։

— Ինչո՞ւ չեք ամուսնանում,— վրա բերեց այդ կինը, որ շատ աղջիկներ ուներ իգական պանսիոնում։— Դուք հարուստ եք, տիտղոսավոր, հին ազնվական, ունեք տաղանդ, ապագա, ամեն ինչ ձեզ ժպտում է։

— Այո՛,— պատասխանեց նա,— բայց կա մի ժպիտ, որ սպանում է ինձ...

Հաջորդ օրը տիկինը մեծ զարմանքով լսեց, որ պարոն դը Սյուսին գիշերը ցրել էր իր գանգը։

Փարիզի բարձր հասարակության մեջ այդ արտասովոր իրադարձությունը մեկնաբանեցին զանազանակերպ, և յուրաքանչյուրը դրա պատճառն էր որոնում։

Ամեն մի մեկնաբանողի ճաշակի համաձայն՝ թղթախաղը, սերը, փառասիրությունը, ծածուկ խառնակեցությունը համարվեցին պատճառն այն աղետի, որը 1812 թվականին սկսված ողբերգության վերջին տեսարանն էր։ Երկու մարդ միայն, մի դատական աստիճանավոր և մի ծեր բժիշկ գիտեն, որ կոմս դը Սյուսին մեկն էր այն ուժեղ մարդկանցից, որոնց աստված դժբախտ կարողություն է տալիս ամեն օր հաղթական դուրս գալու այն սոսկալի պայքարից, որ նրանք մղում են ինչ-որ անծանոթ հրեշի դեմ։ Երբ, մի րոպե, աստված ետ է քաշում իր հզոր ձեռքը, նրանք խորտակվում են։

ՄՆԱՔ ԲԱՐՈՎ

Այս պատմվածքն առաջին անգամ տպագրվել է «Մոնդ» ժուռնալում, 1830 թվականի մայիս—հունիս ամիսներում։ Սկզբում պատմվածքի վերնագիրն էր. «Զինվորական հիշողություններ, մնաք բարով»։ 1832 թվականին հրատարակվեց առանձին գրքույկով և կրում էր «Մի կնոջ պարտականությունը», հետագայում՝ 1835 թվականին, պատմվածքը մտցվեց «Փիլիսոփայական էտյուդներում» իր ներկա վերնագրով։

Այս պատմվածքը բովանդակում է նապոլեոնական 1812 թվականի Ռուսաստանի դեմ կատարած արշավանքի ամենասարսափողեցիկ մի էպիզոդը, երբ ֆրանսիական բանակը, գլխովին ջախջախված, նահանջում էր արևմուտք, և որին կրնկակոխ հետևում էր իր հայրենիքի պաշտպանության համար ոտքի ելած ռուսական

բանակը, նապոլեոնական բանակի մնացորդներին սեղմելով Բերեզինա գետի ափերին, որի անցումը ողբերգական եղավ ֆրանսիական զորքի համար:

¹ **Իլ-Ադամ** — Կանտոնի կենտրոն Ֆրանսիայում, Փարիզից ոչ հեռու:

² **Կասան** — դղյակ Իլ-Ադամի համայնքում:

³ **Կուպեր Ֆենիմոր** (1789—1854) — ամերիկյան նշանավոր վիպագիր, հեղինակ արկածալի վեպերի, որոնց մեջ նկարագրված է ամերիկյան բնիկների կենցաղն ու բարքերը:

⁴ **«Օսիան»** — շոտլանդական պոետ Ջեմս Մակֆերսոնը գրել է «Օսիանի երգեր», որ նա ներկայացրել էր իբր հին շոտլանդական երգիչ (գուսան) Օսիանի երգերի անգլերեն թարգմանությունը: Մակֆերսոնի տաղանդավոր այդ կեղծումը մեծ ազդեցություն ունեցավ արևմտաեվրոպական ռոմանտիկական գրականության վրա: Օսիանի երգերը համակված են մելամաղձոտությամբ և պարունակում են բնության թարմաշունչ նկարագրություններ:

⁵ **Բերեզինայի գետանցումը** — տե՛ս «Վենդետտայի» N10 ծանոթագրությունը:

⁶ **Մարշալ Վիկտոր Կլոդ** — Վիկտոր Պերեն (1766—1841) նապոլեոնական մարշալ, նա աչքի ընկավ Մարենգոյի ճակատամարտում: Նապոլեոնի անկումից հետո միացավ Բուրբոններին, քվեարկեց մարշալ Նեյի մահապատիժը: 1821 թվականին ռազմական մինիստր էր:

⁷ **Ստոտիանկա** — ռուսական գյուղ. Բերեզինայից ոչ հեռու:

⁸ **Վիտգենշտեյն** — ռուսական ֆելդմարշալ (1769—1843), ծագումով գերմանացի: Կուտուզովի մահից հետո նրան տրվեց դաշնակից զորքերի հրամանատարությունը:

⁹ **Էրլե** Ժան-Բատիստ (1758—1812) — ֆրանսիական գեներալ, նրան էր հանձնված Բերեզինայի գետանցման հսկողությունը:

¹⁰ **Բերթիե** Լուի-Ալեքսանդր (1753 —1815) — Վագրամի իշխան, Ֆրանսիայի մարշալ, մեծ համարում ուներ Նապոլեոնի մոտ, սակայն 1814 թվականին շնորհագրվեց: 1815 թվականին ինքնասպանություն գործեց կամ սպանվեց Բամբերգում: